

ՀՅԴ Պատմական





ԴՐՕՇԱԿ



Փետրվար N2 (1605)

2009

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատանեաց Միություն

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք 2

Հայ դաս

Հայ դասի պայքարը ինքնանպատակ չէ 4

Իրավագիտական

Իրավական և քաղաքական փաստարկները ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում 7

Հարցազրույց

Սումգայիթ՝ ցեղասպանության նորագույն օրան 10

Սոցիալ-տնտեսական

Ինչ է իրենից ներկայացնում «Արևելյան գործընկերություն» **ծրագիրը** 16

Տեսական

Ժողովրդավարութեան փորձը Հայաստանում.
հարցադրումներ 20

Նյութեր թուրք պատմաբանների համար

Հայոց կոտորածների կապակցությամբ 1919-1920 թթ. Թուրքիայում հարուցված դատական գործերը.
երեք մահապատիժ 29

Դաշնակցական բեմ

Ռոստոմի գաղափարական մեծութիւնը 34

Ռեպլիկ

Վիրտուալ հայրենիքի ջախջախումը, կամ իրականում ինչո՞վ է զբաղված «Առավոտ» օրաթերթը 37

Անհայտ եջեր

Վճռական ժամին

Անձնական յուշեր ու ապրումներ (շարունակություն) 41

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Սօլիպին-Վրոնցովեան ռէժիմը եւ «Դաշնակցությունը» 44

Նոր գրեր

Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը) 46

Պատկերասրահ

Արևիկ Պետրոսյան 48

Digitized by ARF PR Office

Մենք ուժեղ ենք, երբ միասին ենք

2009թ. յունուարի 31-ին, Հ.Յ.Դ. Բիւրոյի նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ հանգանակային ճաշկերոյթ՝ ի նպաստ Հայ Դատի աշխատանքների: Ուզում ենք անդրադառնալ Հայ Դատի նորագոյն պատմութեան այս իրադարձութեանը:

Հակառակ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետեւանքով առաջացած հոգեվիճակի՝ ստացուած արդիւնքներն ապացուցում են, որ մեր ազգի հարուստ խաւում կան մարդիկ, ովքեր իրենց նիւթական անմիջական շահերը ստորադասում են համազգային շահերին: Սա նշանակում է, որ մեր դատի արդար լուծմանը հաւատ ընծայող, ունեւոր մարդիկ գիտակցում են նախ այն, որ Հայ Դատի պայքարն անհրաժեշտութիւն է բովանդակ ազգի գոյատեւման համար («*Մեր էութեան*,- այս էական բանաձեւն է ամրագրել Արամ Կաթողիկոսը ճաշկերոյթի ընթացքում,- *մեր տագնապների, մեր գոյութեան հետ անխախտելիորէն շաղախուած է Հայ Դատը*») եւ որ այդ պայքարի դրօշակակիրը Հ.Յ.Դ.-ն է, եւ վերջապէս՝ այդ պայքարի յաջողութեան հարցում, ի թիւս այլոց, նիւթական միջոցները անհրաժեշտ պայման են:

Ճաշկերոյթի ժամանակ հանգանակուած գումարը (հինգ միլիոն ԱՄՆ դոլար) կրկնակի գերազանցեց 2001 թ. Ժնեւի եւ 2005 թ. Փարիզի նոյնանման հանգանակութիւնների միացեալ գումարը. «*Գումարը բարձրացել է*,- շեշտում է Արամ Վեհափառը,- *որովհետեւ աշխատանք է արուել: Մարդիկ դրամ են տալիս, երբ գործ են տեսնում, երբ տեսնում են թափանցիկութիւն եւ հաշուետուութիւն*»:

Այս առիթով ուզում ենք մէկ անգամ էլ նշել Հայ Դատի այսօրեայ մարտահրաւէրներն ու գործունէութեան ծաւալը: «*Մենք*,- իր խօսքում ընդգծեց Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարեանը,- *հաւատում ու աշխատում ենք, եւ Լեռնային Ղարաբաղը ազատ ու անկախ*

է լինելու: Մենք հաւատում ու աշխատում ենք՝ Հայոց ցեղասպանութիւնը վերջնականապէս ճանաչուելու ու դատապարտուելու է, վերականգնուելու են հայութեան իրաւունքները: Մենք հաւատում ու աշխատում ենք՝ Հայաստանի Հանրապետութիւնը դառնալու է զարգացած, ուժեղ, արդար երկիր: Հայաստանը հաշուառելի գործօն է դառնալու աշխարհում»: Հենց այս խօսքերում վերարծարծուել է Հ.Յ.Դ. գաղափարական հաւատամքը. ազգային ազատագրական դատին զուգահեռ՝ հաւատարիմ մնալ ամբողջական արդարութեան սկզբունքին, արդար Հայաստանի կերտման երազանքին: Իսկ հայութեան իրաւունքներ ասելով՝ մենք հասկանում ենք Միացեալ Հայաստանի կերտման գաղափարը:

Հայ Դատի մասին իր հեռատեսիկական բնորոշումները տուեց Հ.Հ. Նախագահը՝ իր ուղերձում. «*Հայ Դաս հասկացութեանը մշտապէս աւելանում են նոր բաղադրիչներ: Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը, Արցախի հարցի արդարացի եւ խաղաղ կարգաւորմանն ուղղուած ջանքերն այսօր աւելանում են նորերով... Մեր միասնական նպատակը Հայաստանի ու հայ ժողովրդի հզօրացումն է: Այս պայքարը նոր փուլ է մտնում, եւ համոզուած եմ, որ մենք կը կարողանանք աւելի արագ հասնել մեր համազգային նպատակների իրականացմանը, ինչին պարտաւոր է նպաստել մեզանից իւրաքանչիւրը*»:

Հայ Դատի պայքարում՝ քարոզչական եւ դիւանագիտական համազգային գործի ծաւալները, անհրաժեշտաբար, մեծանում են: Հայ Դատի արդէն տարիներ աշխատող,Վաշինգտոնի, Մոսկուայի, Բրիւսէլի գրասենեակներին եւ վերջին տարիներին իր գործունէութիւնը սկսած Բէյրութի գրասենեակին աւելանում են նորերը:

Հայ Դատի պայքարում յաջորդը համախմբուածութեան հիմնահարցն է. «*Հայ Դասը միաւորել է ամէնքիս*,- ասում է Հ.Յ.Դ. Բիւրոյի խօսքում,- *միաւորել է կոնկրետ գործը, որ վեր է ընթացիկ հարցերից ու տարբերութիւններից: Գործ, որ միտուած է Հայաստանի ու հայութեան հզօրացմանը, մեր հաւաքական ներուժի կուտակմանն ու կազմակերպմանը, աշխարհում հաշուառելի գործօն դառնալուն*»: Հանգանակութեան սկզբնաղբիւրները միանգամայն նոր իրավիճակ են ուրուագծում համախմբուածութեան գործընթացում: «*Ուրախալի է, որ հանգանակութեան մէջ շարունակաբար աճում է Հայաստանի տեսակարար կշիռը*,- ասում է Հ.Հ. Նախագահի ուղերձում,- *այս իրողութիւնն ամրապնդում է մեր միասնականութիւնը, կրկին փաստելով, որ Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը չեն կարող հզօրանալ միմեանցից անկախ: Մենք ուժեղ ենք մեր հաւաքականութեամբ ու միասնականութեամբ, եւ սա է դէպի աղագայ տանող ճշմարիտ ուղին*»:

Շեշտենք, ուրեմն, համախմբուածութեան գործընթացի որակական այս փոփոխութեան իրողութիւնը: «*Տասնամեակներ շարունակ Հայ Դատի աշխատանքներով միայն Սփիւռքն է զբաղուել*,- ընդգծում է Հ.Յ.Դ. Բիւրոն:- *Զբաղուել է նուիրումով, զոհողութիւններով ու զրկանքներով: Գործը արուել է կամաւոր մարդկանց յանձնառութեամբ՝ առանց էական նիւթական միջոցներ ունենալու: Արդիւնքում՝ վառ է պահուել Հայ Դատի պահանջատիրութիւնը, աշխարհը չի մոռացել մեր հարցը: Այսօր ընդհանուր պայքարին միացել են Հայաստանն ու հայաստանցիները՝ բազմապատկելով մեր կարողականութիւնը: Այս միացումը նաեւ գնահատանք ու երախտագիտութիւն է Սփիւռքի կատարած աշխատանքի հանդէպ*»: Այս իմաստով դիպուկ բնորոշմամբ է հանդէս եկել Արամ Վեհափառը, ասելով՝ «*Միաւասիկ շատ գեղեցիկ է այս երեւոյթը, երբ ժամանակին Հայ Դասը առաւելաբար Սփիւռքի Դասն էր, այսօր Հայաստանը միացել է ոչ միայն հանգանակութեամբ, այլեւ իր պետութեամբ ու ժողովրդով*»:

«*Սիրելիներս*,- իր խօսքը շարունակել է Արամ Վեհափառը,- *մենք այսօր Հայ Դատին դրամ տուեցինք, ուրիշները Հայ Դատի համար արիւն թափեցին, իրենց կեանքը տուեցին: Դիւրին է դրամ տալը, սակայն ոչ դիւրին՝ կեանք տալը: Այսօր իւրաքանչիւր հայ ինքն իրեն պէտք է հարց տայ. ինչ եմ անում Հայ Դատի համար եւ ինչ կարող եմ տալ Հայ Դատին*»:

Հայ Դատի արդար լուծման համար մղուող պայքարը իմաստաւորում է մեր աշխարհասփիւռ ժողովրդի, սերունդների ազգային ինքնութիւնը, նոր շունչ հաղորդում մեր նորանկախ պետականութեանը, խթանում նրա հզօրացումը: Խորհենք, թէ ինչու է Հայ Դատի բաղադրիչ համարում մէկ կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, միւս կողմից՝ Հայաստանի հզօրացման խնդիրը Եւ այս բոլորը մէկտեղում են՝ որպէս ամբողջական հարց, գաղափարական համակարգ: Ներքին հակասութիւններ չկան այստեղ: Հայրենի մտաւորականութեան, Հայաստանի գիտակից հարուստների եւ պետական այրերի հետզհետէ ծաւալող մասնակցութիւնը Հայ Դատի պայքարին հէնց այս ներդաշնակութիւնն են վկայում:

Հայ Դատի գայթարգելիցնացողական չէ...

- Հայ Դատի աշխատանքների շարունակականությունը, զարգացումը ապահովելու նպատակով այս տարվա փետրվարի 1-ին, ՀՅԴ նախաձեռնությամբ, տեղի ունեցավ հանգանակային ճաշկերույթ: Որքանո՞վ էր արդյունքը ապասելի և, արդյո՞ք, նախատեսված աշխատանքների ծավալը նկատի ունենալով, հավաքված գումարը կարելի է բավարար համարել:

- Տնտեսական տագնապ է աշխարհում և, բնականաբար, սկզբում այդպիսի արդյունք դժվար էր կանխատեսել, սակայն երբ սկսեցինք կազմակերպական գործնական աշխատանքները, օրըստօրե ավելի հուսավորվեցինք և արդեն վերջին շաբաթվա ընթացքում արդյունքը նախատեսելի էր: Այստեղ ուզում եմ մեկ հարց մատնանշել. շատ բան կախված է կազմակերպված աշխատանքի ծավալից ու բնույթից: Հաճախ մարդիկ նվիրատու չեն դառնում, որովհետև պարզորեն նրանց դիմող չի լինում, հարցի էությունը նրանց ներկայացնող չի լինում. պետք է ընդլայնել «ավանդական» նվիրատուների ցանկը: Դրամահավաքի գործը ինչ-որ տեղ նաև քարոզչական, կազմակերպական գործ է: Եվ հավատացած եմ, եթե ավելի լավ աշխատեինք, շատ ավելի մեծ արդյունք էինք ունենալու: Ցավում եմ, որ շատերին չկարողացանք հասնել-դիմել, այլապես նրանք ևս ընդհանուր գործին մասնակից դառնալու առիթը կունենային:

Իսկ գումարը կարելի է բավարար համարել, թե ոչ հարցին՝ պի-

ի երկար ժամանակների վրա երկարող աշխատանքներն ու թափանցիկ գործելաոճը համընդհանուր հարգանք ու վստահություն են ստեղծել:

բ. Մեր նվիրատուների շարքում կային այլ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, նույնիսկ ղեկավար դեմքեր, ինչը մի կողմից ապացույցն է այն բանի, որ հայ քաղաքական վերնախավը դրսևորում է աննախադեպ կեցվածք. ոչ կուսակցամոլական, ոչ հատվածական, ոչ խանդի ու չարակամության տրամադրություն, այլ՝ այդ աշ-

տի ասեմ, որ Հայ դատի և ընդհանրապես քաղաքական աշխատանքների համար սահման չկա. ինչքան մեծ լինեն հնարավորությունները, այնքան ավելի մեծ աշխատանքի հնարավորություն կառաջանա: Ծով կարիք, կարելիություն ու ասպարեզ կա աշխատանքի, և մենք պարտավոր ենք օրըստօրե մեծացնել մեր կարելիությունները ավելի ազդեցիկ քաղաքական գործոն դառնալու համար ամենուր:

Այս դրամահավաքին մասնակցում էին Եվրոպայի, Միջին Արևելքի, Հայաստանի ու ԱՊՀ հայությունը, նպատակը՝ Եվրոպայում, Միջին Արևելքում և Կովկասում Հայ դատի քաղաքական աշխատանքների կազմակերպումն է: Անշուշտ, ձեռք բերած արդյունքը մղելու է ընդարձակելու մեր գործունեությունը, շուտով այդ մասին հանրությունը կտեղեկանա:



- Ո՞րն եք համարում այս հանգանակության առանձնահատկությունը:

- Այս միջոցառումը մի քանի բան հաստատեց.

ա. Կրկին ապացուցվեց, որ վստահության մթնոլորտ է ձևավորված մեր շուրջ: Հայ դատի հանձնախմբեխատանքները գնահատվեցին իբրև ազգային, անհրաժեշտ գործունեություն. որին փորձում են օժանդակել, հզորացնել, օգնել, որպեսզի ձևավորվի հայկական ուժ, ազդեցիկ ուժ: Օրինակելի վարվելակերպ է սա՝ օգնել այն աշխատանքներին, որից

պատմական կամ ինչ-ինչ պատճառներով հեռու են մնացել իրենք:

գ. Հայ դատի գործունեությունը մինչ այժմ գլխավորաբար ծանրացած է եղել հայկական Սփյուռքի վրա, իսկ այս դրամահավաքին զգալի ներկայություն էին հայաստանցիները. հայաստանցիների մասնակցությունը գնահատական է, որ հայրենի ժողովուրդը ցուցաբերում է Սփյուռքի ուժերով կատարված աշխատանքին:

դ. «Ֆուտբոլային» դիվանագիտության նախաձեռնությունից հետո ծայր առած մտահոգությունները, կասկածները Հայաստանի քաղաքական վերնախավի մոտ հայկական պահանջատիրության դիրքերից նահանջելու հարցում, այս փաստով առնվազն չափազանցություն կարելի է համարել:

- Ոմանք Հայ դատի աշխատանքները, Հայ դատի գործունեությունը հակադրում են Հայաստանի իշխանությունների՝ Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելուն միտված քաղաքականությանը: Արդյոք առկա՞ է նման հակադրություն կամ կլինի՞ ապագայում, թե՞ այս խնդրում գործում է և պիտի գործի համադրումը:

- Կարող եմ վկայել՝ մենք իսկապես ցանկանում ենք, որ դրանք չհակադրվեն միմյանց, կարող եմ նաև վկայել, որ նույնն են ցանկանում ՀՀ իշխանությունները: Բայց ինչո՞ւ ենք այդպես ցանկանում և նման բան հնարավո՞ր է, թե՞ ոչ: Պարզաբանեմ. Հայ դատի պայքարը ինքնանպատակ չէ, այն հետապնդում է Հայաստանի և հայ ժողովրդի համար ստեղծել գոյության և զարգացման կարելիություն և այդ ճանապարհին հայկական անկախ պետականության գոյությունն ու դերակատարությունը կենսական անհրաժեշտություն են: Իսկ եթե հայկական պետականության զարգացման և առաջընթացի համար հարկ է կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ, թող կարգավորեն, բայց ոչ այնպիսի զիջումների գնով, որ վտանգվի հարցի էությունը՝ Հայաստանի անվտանգության և զարգացման պայմանները: Հարցն այն է, որ ինչքան Հայաստանը անհրաժեշտություն ունի կարգավորելու իր հարաբերությունները Թուրքիայի հետ, նույնքան և ավելի՝ նման անհրաժեշտության առջև է կանգնած Թուրքիան: Ուժեղ նկարագիր, հնարամիտ միտք է պետք հավանական վտանգը շրջանցելու համար: Հուսամ՝ մենք ունենալու ենք նման նկարագիր:

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱ թղթակից անդամ

Սկիզբը՝ «Դրօշակ», 2008 թ., N 9-10

ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՒՄ

1992 թ. մարտի 5-ին Ադրբեջանական Հանրապետությունը ՄԱԿ ընդունվեց ԱդրԽՍՀ սահմաններով (սահմաններ, որ ինքը նույնիսկ չէր հռչակել, հակառակ այն բանի, որ պարտավոր էր անել դա ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելուց հետո): Դրանով Արևմուտքը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը տեղափոխեց նոր իրավական դաշտ: Եվ դա ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավական դաշտն է: Սակայն այստեղ մեզ սպասում էր նոր ծուղակ:

Կարևոր է նկատել, որ 1989 թ. դեկտեմբերի 1-ի վերամիավորման մասին համատեղ որոշումից հրաժարվելու, անկախության մասին հանրաքվեն միայն Խորհրդային Հայաստանի սահմաններում անցկացնելու փաստով, Լեռնային Ղարաբաղի անկախացման հռչակումը իրավաբանորեն անտեսելու իր մարտավարությամբ Երևանն ինքը խնդիրը տարավ դեպի ինքնորոշման դաշտ:

Թվում է, ի՞նչ վատ բան կա դրանում: Ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի սկզբունք է, իսկ մենք էլ պայքարում ենք, որ խնդիրը տեղափոխվի իրավական դաշտ: Սակայն պարզվում է, որ դա մեզ համար աննպաստ իրավական փաստարկ է: Եվ ահա թե ինչու:

Նախ ակնհայտ է, որ սկզբունքը խնդիրը կապում է նախկին ԼՂԻՄ-ի հայության ինքնորոշման հետ: Առավելագույնը, որին հայկական կողմերը կարող են հասնել այդ սկզբունքի շրջանակներում, սակարկումներն են կապված Շահումյանի շրջանի հետ, որտեղից ընտրված ժողպատգամավորները մասնակցել են անկախության մասին հռչակագրի ընդունմանը: Սակարկության նյութ կարող է դառնալ նաև ՀՀ-ի հետ ԼՂՀ աշխարհագրական կապի խնդիրը, սակարկություն, որ միանգամայն տրամաբանական կերպով ընդունում է «փոխզիջումների ձևաչափ»: Ըստ էության հենց այդ շրջանակներում էլ ԵԱՀԿ հովանու ներքո ընթացել են բանակցությունները մինչ օրս: Քարվաճառ, Քաշաթաղ, Կովսական և այլ տարածքներ այդ հարացույցի շրջանակներում «բնականոն ձևով» դառնում են օկուպացված տարածքներ:

Դժվար չէ նկատել, որ այս մոտեցումը «սնվում է» ելակետային այն գաղափարից, որ 1991-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը և Շահումյանի շրջանը ԱդրԽՍՀ/ԱՀ-ից անջատվել են ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի հայտնի օրենքի վրա: Սա է մոտեցման

հիմքում ընկած իրավական փաստարկը: Ռուսաստանն ու Արևմուտքը, որ դեռ 91-ից որոշել էին այդ օրենքն անտեսել, մինչ օրս նույն մտքին են, չնայած գիտակցվում է նաև, որ քանի հեռանում ենք 91-ից, այնքան այդ օրենքը դադարում է վտանգավոր լինել Ռուսաստանի համար: Բայց օրենքը չհիշատակելու, այն շրջանցելու ավանդույթը գոնե Մոսկվան պահպանում է: Միջնորդները կարող են, իհարկե, այդ օրենքի անունը չտալ և փոխարինել այն «ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունք» հասկացությամբ: Բայց երբ այդ իրավունքը «թարգմանվում է տարածքների լեզվի», պարզվում է, որ այն համընկնում է 90 թվականի ապրիլի 3-ի օրենքի ընձեռած տարածքների հետ: Ո՞ւմ ինքնորոշման մասին է խոսքը, կարող են հարցնել մեզ, ինքնավար մարզի՞ ժողովրդի կամ առավելագույնս նաև Շահումյանի շրջանի՞: Այդ դեպքում լավագույն դեպքում այդ տարածքներն էլ կարող են դառնալ բանակցությունների նյութ: Այս մոտեցման սահմաններում միջազգային հանրությունը մեծագույն լավություն արած կլինի հայկական կողմերին, եթե Բաքվի առջև որպես օրինական հարց բարձրացնի ՀՀ-ի հետ ԼՂՀ աշխարհագրական կապի հարցը, բավարարելու համար հայկական կողմերի այդ պահանջը:

Ինքս ոչ մի կասկած չունեմ, որ գաղտնիության քողի տակ ընթացող բանակցություններում հայկական կողմերի ոտքերից կախված 1990 թ. ապրիլի 3-ի ծանրաքաշը չի թողնում նրանց դուրս գալ նախկին ինքնավար մարզի սահմաններից և ազատագրված տարածքների համար գտնել հուսալի իրավական հիմնավորում: Ապրիլի 3-ի օրենքը ինքը եղել է ԱդրԽՍՀ հայության ինքնորոշման իրավունքի ճանաչում՝ անկախ այն բանից, թե Ադրբեջանական Հանրապետության անկախացումը Բաքվի մերօրյա իրավաբանները կապում են այդ օրենքի հետ, թե՝ ոչ: Միայն թե 1991-ի դրությամբ, այն բանից հետո, երբ ԱդրԽՍՀ հայաբնակ բազմաթիվ տարածքներից՝ Բաքվից մինչև Հյուսիսային Արցախ (Շամքոր, Գանձակ, Քարհատ, Խանլար) հայերը զանգվածային բռնություններով արդեն դուրս էին մղված, ԽՍՀՄ այդ օրենքից օգտվեց միայն ԼՂ ինքնավար մարզի ու հարակից Շահումյանի շրջանի հայությունը: Առանց իր հայրենիքից զրկված ադրբեջանահայության անունը տալու, առանց նրա համար որևէ փոխհատուցման հարց բարձրացնելու մենք ինքներս խնդիրը հանգեցրինք ԼՂԻՄ-ի ու լավագույն դեպքում Շահումյանի շրջանի շուրջ սակարկումներին՝ բացահայտ կամ անբացահայտ ձևով մեկնակետ ընդունելով ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը և հարցը իրավաբանորեն ձևակերպելով որպես ինքնավար մարզի (լավագույն դեպքում նաև Շահումյանի շրջանի) հայության ինքնորոշման հիմնախնդիր: Ազատագրված տարածքները բնականորեն ստանում են օկուպացված տարածքի կարգավիճակ, որը մենք մեր ունկի համար ավելի հաճելի ձևակերպումով անվանում ենք անվտանգության գոտի: Խնդրի իմաստավորման այդ հարացույցը մեզ այլ հնարավորություն չի տալիս: Մեր հույսը դառնում է այն, որ առավելագույնին ձգտող Բաքուն չի համաձայնվում նույնիսկ իր համար նվազագույն այդ «զիջումների» հետ:

Խնդիրը ինքնորոշման իրավական հիմքի վրա «տեղադրելը» բացի նշվածից ունի մի շարք այլ աննպաստ հետևանքներ: Բանն այն է, որ այդ սկզբունքը սիրված չէ ոչ Ռուսաստանի, ոչ էլ եվրոպական երկրների մեծամասնության կողմից: Բոլոր այն երկրները, որոնք ունեն ինքնորոշման իրավունքով մայր երկրից անջատվելու ձգտում ունեցող կազմավորումներ, հաճույքով չեն լսի ղարաբաղյան խնդրում հայկական կողմի ինքնորոշման իրավունքի վրա հիմնված փաստարկները: Մեր հիմնավորումները ժպտադեմ լսելուց հետո նրանք անպայման կասեն, թե ինքնորոշման իրավունքը անպայման անջատում չի ենթադրում կամ թե իրենք պատրաստ են ամենաբարձր երաշխիքները տալ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության ապահովմանը Ադրբեջանական Հանրապետության կազմում՝ ինքնավարության ամենաբարձր աստիճանը նրան տրամադրելու հետ մեկտեղ: Ոչ մի բազմազգ պետություն չի ցանկանա, որ ինքնորոշման սկզբունքը անարգել անջատողականության գործիք դառնա: Այստեղից էլ տարածքային ամբողջականության և ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքների միջև հանկարծակի ձևով հայտնաբերված «հակասությունը», այստեղից էլ այդ իբրև թե հակասության մեջ գտնվող սկզբունքների միաժամանակյա կիրառությունը՝ տարածքային ամբողջականության անվերապահ գերակայության պայմանով: Փաստորեն այն, ինչ մեզ առաջարկել են Լիսաբոնում: Ահա և քաղաքականության՝ իրավական դաշտ սողոսկելու մեկ ձև ևս: Քաղաքականացման արդյունքում ձևախեղված հարցին «հագցնում են» կեղծ իրավական զգեստներ: Մեզ հետ խոսում են իրավունքի,

բայց խնդրի բովանդակության ու բնույթի հետ կապ չունեցող իրավունքի անունից:

Հետխորհրդային իրողությունների կոնտեքստում խնդիրը ինքնորոշման իրավունքին հանգեցնելու մեզ համար ամենատհաճ հանգամանքն այն է, որ անբացահայտ ձևով մենք Լեռնային Ղարաբաղը համարում ենք մերօրյա Ադրբեջանական Հանրապետության մաս: Իրոք, ինքնորոշման իրավունքի իրականացման համար պայքարող բոլոր ժողովուրդներն այսօր պայքարում են, ինչպես հաճախ ասում են, մայր պետությունից անջատվելու համար: Բասկերը՝ Իսպանիայից, ֆրանսախոս կանադացիները՝ Կանադայից: Բոլոր դեպքերում խոսքը որոշակի սահմաններում ճանաչված «մայր պետությունից» այս կամ այն ժողովրդի «պոկվելու», որոշակի տարածքներով անջատվելու մասին է: Հիմնախնդիրը նույն բովանդակությունն է ստանում, երբ հարցը հանգեցնում ենք ԽՍՀՄ տրոհումից հետո Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը: Մենք լռելյայն ընդունում ենք Ադրբեջանական Հանրապետության նախկին ԱդրԽՍՀ սահմաններում ճանաչված լինելու փաստը, ինքներս համաձայնվում ենք դրա հետ, Լեռնային Ղարաբաղը դիտում որպես Ադրբեջանական Հանրապետությանը պատկանող տարածք և այնուհետև սկսում պայքարել, որ ճանաչվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: ՀՀ պաշտոնական դիրքորոշումը ներքուստ անհետևողական է, քանի որ, ինչպես նշվեց վերը, հակասում է ՀՀ Գերագույն խորհրդի 1992 թ. հուլիսի 8-ի որոշմանը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը չի ճանաչի որևէ մի փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղը նշված կլինի որպես Ադրբեջանական Հանրապետության մաս:

Եթե ավարտուն տեսքով ներկայացնելու լինենք պաշտոնական Երևանի 1991-ից որդեգրած դիրքորոշումը, այն կհանգի հետևյալին՝ «Այո, Լեռնային Ղարաբաղը իրավաբանորեն Ադրբեջանական Հանրապետության տարածքն է (այստեղ նա բոլորի հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղ ասելով հասկանում է նախկին ԼՂԻՄ-ը, որի սահմանները գծել է Բաքուն), սակայն Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ունի ինքնորոշման իրավունք, որի հիման վրա կարող է իր տարածքում (նախկին ԼՂԻՄ-ն է նկատի առնվում) ստեղծել սեփական ինքնիշխան պետությունը»: «Սա քո տարածքն է, բայց ես այն ուզում եմ քեզնից խլել, օգտվելով ինքնորոշման իրավունքից»՝ ավելի պարզ ասած սա է պաշտոնական Երևանի դիրքորոշումը:

Կարևոր երկու ճշգրտում:

Առաջին: Երևանը երբեք չի խոսում այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը արդեն բազմիցս ճանաչված է: Այն նախ ճանաչվել է Բաքվի կողմից՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ի իր հռչակագրով և այնուհետև ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքով: Դրանք լռության են մատնվում: Խնդիր է դրվում մի անգամ ևս հասնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը:

Երկրորդ: Երևանը միջնորդների հետ մեկտեղ Լեռնային Ղարաբաղը նույնացնում է ԼՂԻՄ-ի հետ՝ նրա սահմաններից դուրս թողնելով ոչ միայն ազատագրված տարածքները, այլև Կենտրոնական Արցախի (Շահումյանի, Խանլարի շրջանները) և Հյուսիսային Արցախի (Քարհատի, Շամքորի, Գետաբեկի շրջանները) բոլոր այն տարածքները, որ Կովբյուրոյի որոշման համաձայն պետք է ԼՂԻՄ-ի մաս կազմեին:

Իսկ ի՞նչ կեցվածք է ընդունել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Ժամանակ առ ժամանակ Ստեփանակերտը հայտարարում է, որ առանց իր մասնակցության ընդունված ցանկացած որոշում որևէ իրավական արժեք չի ունենա: Ճիշտ է անում: Սակայն Ստեփանակերտն, այնուամենայնիվ, քիչ է ձեռնարկում այնպիսի նախաձեռնություններ, որոնք կանդրադառնան բանակցային ընթացքի և միջնորդների դիրքորոշման վրա: Նույնիսկ այն դեպքում, երբ Եվրոպան ԼՂՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների, խորհրդարանական ու նախագահական ընտրություններից հետո հանդես է գալիս դրանց օրինականությունը չճանաչելու մասին հայտարարություններով, Ստեփանակերտը անթույլատրելի մի անտարբերությամբ լռության է մատնում դրանք, չհիշեցնելով Եվրոպային, որ ինքը դեռևս 1992-ի մարտի 24-ին Հելսինկիում ընդունած իր որոշմամբ հարաբերությունների մեջ պետք է մտնի **Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչների** հետ:

Սա այն է, ինչ մակերեսին է: Բայց կողմերն ունեն նաև մտքում պահած քաղաքական ինչ-որ հաշվարկներ, որոնց մասին սովորաբար չեն բարձրաձայնում: Չեն բարձրաձայնում, սակայն «մակերեսին գտնվող նյութը» բավարար հիմք է տալիս կռահելու դրանք՝ գոնե առաջին մոտավորության ճշտությամբ:

Սակայն դա այլ հարց է և պահանջում է հատուկ քննություն:

ՍՈՒՄԳԱՅԻԹ՝ ցեղասպանության նորագույն օրրան

Այս բնակավայրը, որ արդյունաբերության և շինարարության բուռն զարգացման արդյունքում հեռպատերազմյան խարխուլ գյուղից վերածվեց Ադրբեջանի՝ բնակչությամբ և արդյունաբերական նշանակությամբ երկրորդ քաղաքի, 1988 թվականի փետրվարի վերջին օրերին պետք է առաջադեմ մարդկությանը հայտնի դառնար որպես արյան ու սպանդի քաղաք, որպես հայության կազմակերպված ոչնչացման ևս մեկ խորհրդանիշ:

Քսանմեկ տարվա վաղեմության դեպքերը, որոնք Խորհրդային կայսրության փլուզման առաջին նախանշաններն էին, մեկ անգամ ևս ընդգծեցին լենինյան ազգային քաղաքականության սնանկությունը, այդ գաղափարախոսության հետևորդների անճարակությունը, նման իրավիճակներում կողմնորոշվելու և վճռական քայլեր ձեռնարկելու անկարողությունը: Նրանք՝ Խորհրդային Միության վերջին օրերի ղեկավարները, փաստորեն, իրենց անգործությամբ, կամ, որ ավելի ճիշտ կլինի ասել, ազգամիջյան այս աննախադեպ կոնֆլիկտի հանդեպ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքով,

կանգնեցին Սումգայիթի նախաձիրը կազմակերպողների և իրականացնողների կողմին: Բողոքի բազմահազարանոց, իսկ Երևանում ընդհուպ մինչև կես միլիոնանոց հանրահավաքներում իր հավատն առ կոմկուսն ու կոմունիստ ղեկավարներն արտահայտող հայ ժողովուրդն այդ օրերին պարզապես խաբված էր ու միայնակ՝ մեծ ողբերգության առջև:

Հայտնի գրող և հրապարակախոս Զորի Բալայանը տարիներ անց Սումգայիթի իրադարձությունների մասին կգրի. «Ստալինի մահից հետո ԽՍՀՄ-ում տեղի ունեցավ ամենաանհավանականը: Երկրում, որտեղ ապրում էր ելեռնի ու օրը ցերեկով զանգվածային սպանությունների մասին միայն պատմության դասագրքերում կարդացած ու տարեց մարդկանցից լսած մի սերունդ, հանկարծ հայտնի դարձավ, որ Ադրբեջանի մայրաքաղաքի քթի տակ՝ Սումգայիթ ոչ մեծ քաղաքում, վայրենիների ոհմակները հարձակվել են հայերի բնակարանների վրա՝ ձեռքներին ոչ միայն նրանց հասակ հասցեները, այլև մետաղյա ձողեր»:

Ի՞նչ էր տեղի ունեցել: Արդյոք դա համարժեք քա՞յլ էր ադրբեջանցիների կողմից՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչության արդարացի պահանջներին, կազմակերպվա՞ծ, թե՞ հախուռն ծայր առած մի վայրագություն էր: Եվ, վերջապես, ի՞նչ վերաբերմունքի արժանացավ այդ նախաձիրը ԽՍՀՄ ղեկավարության ու մտավորականների կողմից: Այս հարցերի շուրջ ենք զրույցի հրավիրել Զորի Բալայանին, ով 1988 թ. փետրվարյան այդ օրերին մի խումբ հայ մտավորականների հետ բազմաթիվ դռներ է թակել՝ վայրագություններին վերջ դնելու և հետագա արյունահեղություններից խուսափելու նպատակով:

- Պարոն Բալայան, նախ մի քանի խոսքով ներկայացրեք, խնդրեմ, հայերի և հատկապես արցախահայերի՝ Սումգայիթում հայտնվելու նախապատմությունը, ինչպես եղավ, որ համեմատաբար երիտասարդ այդ քաղաքում բնակություն հաստատեցին այդքան մեծ թվով հայեր:

- Մինչև Հայրենական մեծ պատերազմը Սումգայիթն ընդամենը հինգ հազարանոց մի բնակավայր էր: Հավանաբար շատ քչերը կարող էին մտածել, որ պատերազմից հետո Բաքվից 30 կմ հեռավորությամբ, Սումգայիթ գետի եզերքին գտնվող այդ բնակավայրը կընդգրկվի «կոմունիզմի մեծագույն կառույցների» ցանկում: Այն



Զորի Բալայան

ժամանակ Ադրբեջանի կարևորագույն կառույցն էր համարվում Մինգեչաուրի ՀԷԿ-ը, բայց պատերազմից անմիջապես հետո ԼՂԻՄ-ում հայտնվեցին Բաքվից եկած էմիսարներ, ովքեր ազգաբնակչությանը կոչ արեցին ակտիվորեն մասնակցել քաղաքաշինական մեծ ծրագրին և «պատերազմական մեդալներին ավելացնել աշխատանքային հերոսության մեդալները»: Ընդամենը 150 հազ. բնակչությամբ հայկական ինքնավար մարզը հայրենիքին շուրջ 45 հազ. զինվոր էր տվել: Հազիվ նրանց կեսն էր վերադարձել պատերազմից ու ղարաբաղյան գյուղերում տղամարդկանց խիստ պակաս էր զգացվում: Չնայած ժողովրդագրական այս տխուր պատկերին՝ բազմաթիվ ճակատայիններ ու անմորուս պատանիներ արձագանքեցին «դարի կառույցների» շինարարությանը մասնակցելու կոչերին: Նրանց այդ քայլին դրդեցին հետպատերազմյան դաժան սովն ու ապրուստի միջոց գտնելու ձգտումը: Հետագայում թերթերը գրում էին, որ Սումգայիթում շինարարության լեզուն հայերենն է, իսկ ավելի ուշ, հեռուստատեսությամբ, անընդհատ ցուցադրում էին Սումգայիթում հաստատված հայ ընտանիքների աղմկոտ բնակարանամուտի պատկերներ: Ադրբեջանի ղեկավարության կողմից սա արվում էր երկու հատակ դիտավորությամբ. նախ՝ շարունակել աննախադեպ տեմպերով աճող քաղաքի

Սիլվա Կապուտիկյան

շինարարությունը և այդ, որ իրենց համար ավելի կարևոր էր, փոխել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնիկ ազգաբնակչության ժողովրդագրական պատկերը: 1988 թ. փետրվարին Սումգայիթում արդեն 20 հազարից ավելի հայ էր ապրում:

- Պարոն Բալայան, այն, ինչ տեղի ունեցավ Սումգայիթում, Մոսկվայի կողմից «զանգվածային անկարգություններ» որակումից բացի այլ գնահատականի չարժանացավ: Այդ հանգամանքը չէ՞ր արդյոք, որ Ադրբեջանի իշխանություններին մղեց հերթական սադրանքների Բաքվում, իսկ հետո նաև՝ պատերազմի Արցախի դեմ:

- Լուսահոգի ակադեմիկոս Անդրեյ Սախարովը, փաստորեն, առաջինն էր, ով նախազգուշացրեց Կրեմլի ղեկավարներին և մարգարեաբար կանխատեսեց հսկայական երկրում սպասվող հրդեհների ու ավերածությունների շղթայական ռեակցիան: «Մոսկովսկիե նովոստի» թերթում հենց նա քննադատեց «սումգայիթը» և երկրի բարձրագույն ղեկավարությանը փոխանցեց իր այն տեսակետը, որ եթե «սումգայիթին» իրավաբանական գնահատականից բացի չտրվի նաև քաղաքական գնահատական, ապա անկարելի կդառնա կանխել համընդհանուր աղետը, ինչը կհանգեցնի ԽՍՀՄ փլուզման: Նրա այս խոսքերը, մարգարեական էին: Հենց «սումգայիթի» անպատժելիությունն էլ երկու տարի անց հանգեցրեց Բաքվում նոր և ավելի կատաղի բռնարարքների, իսկ հետո նաև ԽՍՀՄ-ի փլուզման ու լայնածավալ պատերազմի՝ Ադրբեջանի և Ղարաբաղի միջև: Այսօր «սումգայիթի» և «բաքվի» կազմակերպիչներին Ադրբեջանում գրեթե սրբերի կարգն են դասում: Նրանց շարքում է նաև ադրբեջանցի այն երիտասարդ սպան, ով Բուդապեշտում կացնահարեց իր քնած հայ գործընկերոջը: Հոգեբանները նշում են, որ մարդասպանի ձեռքը կացին տվողը անպատիժ մնացած «սումգայիթն» է: Եվ այդպես դեռ երկար կշարունակվի, եթե չգիտակցենք, որ Սումգայիթի զոհերը ոչ թե վրեժի, այլ օրենքի գերակայության են կոչում ողջ մարդկությանը: Ճիշտ էր ակադեմիկոս Սախարովը, երբ 88 թվականին լինելով Ղարաբաղում, ասաց. «Դեռ պարզ չէ, թե ովքեր են իրական զոհերը: Նրա՞նք, ովքեր սպանվել են, թե՞ նրանք, ովքեր սպանել են...»: Ահա թե ինչու մեր պարտքն ենք համարում անընդհատ հիշեցնել, թե ինչ տեղի ունեցավ Սումգայիթում քսանմեկ տարի առաջ:

- Որ առաջադեմ մտավորականները նման գնահատականներ պետք է տային տեղի ունեցածին, երևի թե միանշանակ է ու հասկանալի: Իսկ երկրի ղեկավարնե՞րը: Դուք այդ օրերին նրանցից շատերի հետ եք շփվել, ինչպե՞ս էին նրանք ոչ պաշտոնական իրավիճակներում գնահատում եղելությունը, ո՞ւմ էին վերջապես մեղադրում:

- Ճակատագրի բերումով հենց փետրվարի 26-ին, առավոտյան ժամը 10-ին Մոսկվայի Ստարայա հրապարակի իր աշխատասենյակում ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Միխայիլ Գորբաչևն ընդունեց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին և ինձ՝ խորհրդակցելու Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ: Նման բարձր մակարդակի ընդունելությունն, իհարկե, աննախադեպ մի իրադարձություն էր, բայց աննախադեպ էին նաև դրա պատճառներն ու շարժառիթը: Արդեն երկու շաբաթ ԼՂԻՄ-ում և Հայաստանում շարունակ-

վում էին բազմահազարանոց ցույցերը, Երևանում ցուցարարների թիվը գերազանցում էր կես միլիոնը: Թվում էր, թե աշխարհի հզորագույն կայսրություններից մեկի ղեկավարը պետք է հարցերի տարափ տեղար, հետաքրքրվեր, թե ի՞նչ կարելի է անել, որ հայերը հանդարտվեն: Բայց դրա փոխարեն նա պարզապես ասաց. «Իսկ դուք մտածե՞լ եք Բաքվում ապրող 207 հազար հայերի ճակատագրի մասին»: Ես անմիջապես հասկացա, որ Գորբաչևը հենց այնպես չնշեց հենց «207 հազար» թիվը: Կարող էր, իհարկե, կլորացնել՝ ասելով 200 կամ 210 հազար, բայց նա նշեց հենց 207-ը՝ մի թիվ, որ սացվել էր Բաքվից: Այդ կերպ, փաստորեն, նա մեզ շանտաժի էր ենթարկում՝ սկսվեք, այլապես Ադրբեջանի մայրաքաղաքում 207 հազար հայ կարող է կոտորվել:

Իսկ մարտի 2-ին, երբ մենք արդեն Երևանում էինք, մի խումբ մտավորականներով հրավիրվեցինք մասնակցելու ՀԿԿ Կենտկոմում կայանալիք մի հանդիպման, որին պետք է ներկա լինեին նաև Գորբաչևի կողմից Հայաստան գործուղված Դոլգիխը և Լուկյանովը: Առաջինը խոսեց ԽՄԿԿ Քաղբյուրոյի անդամության թեկնածու, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Դոլգիխը. «Դե ինչ, ձեր ուզածին հասա՞ք»: Մենք երևի թե առաջիններից էինք, որ լսեցինք Սումգայիթի մասին. «Տեղի են ունեցել զանգվածային անկարգություններ, որոնց արդյունքում կան մարդկային զոհեր: Մոտ քսան մարդ սպանված է, քսանը՝ բռնաբարված, այրված, ավերված և թալանված է ավելի քան 200 բնակարան, այրված են բազմաթիվ մեքենաներ, խանութներ, կրպակներ»: Նա այս ամենի մասին խոսում էր այնպես, կարծես խոսքն այլ երկրի ու ժողովուրդների մասին էր: Ու նրան շաս տեղին հակադարձեց ղարաբաղյան շարժման ամենաակտիվ և ազդեցիկ գործիչներից մեկը՝ Իգոր Մուրադյանը, ասելով. «Այո, չէր կարելի ժողովրդի ճակատագիրը վստահել անկանխատեսելի տարերքին, գազաններին, որոնք ընդունակ են միայն ավերել ու կոտորել, բայց ոչ երբեք խաղաղ հանրահավաքներ գումարել Գորբաչևի նկարներով ու վերակառուցման կոչերով»:

Սումգայիթում առաջին հակահայկական կոչերն սկսեցին հնչել 1988 թ. փետրվարի 26-ին: Շաբաթավերջ էր: Մենք հետո պետք է հասկանայինք, որ Ադրբեջանում հայերի դեմ ծրագրված բոլոր արյունալի հաշվեհարդարները, «սումգայիթի» փորձով, տեղի էին ունենում հենց



շաբաթվա վերջին օրերին, երբ խորհրդային ղեկավարների մեծ մասը դեռ ուրբաթ երեկոյան շտապում էր մայրաքաղաքից դուրս՝ ամառանոցներում անցկացնելու հանգստյան օրերը, և դժվարանում էր նրանց հետ հեռախոսով կապվելը: Սա, իհարկե, չի արդարացնում կուսակցական ու պետական գործիչների այն օրերի վարքագիծը: Նրանք ամեն դեպքում տեղեկացված էին իրադարձություններին: Մոսկվայի հակաքայլերը, սակայն, ուղղված էին ոչ թե արյունահեղությունների կանխմանը, այլ համահավասարեցման ու համահարթեցման բնույթ ունեին, որոնց արդյունքում զոհն ու դահիճը հայտնվում էին մեղադրյալի միևնույն աթոռին: Ականատեսները պատմում էին, որ անպատժելիության զգացումից մարդասպաններն ամեն ժամ ավելի դաժան ու հանդուգն էին դառնում: Պատահական չէր, ուրեմն, որ ավելի շատ մարդ զոհվեց ջարդարարության չորրորդ օրը՝ փետրվարի 29-ին: Դժվար է ասել, թե ինչով կավարտվեր այս ամենը, եթե Տուլայի օդադեսանտային դիվիզիայի կազմից Ռյազանի 137-րդ գունդը վերջապես Սումգայիթ չմտներ: Գնդապետ Ալեքսանդր Լեբեդը, որ նոր էր նշանակվել դիվիզիայի հրամանատարի պաշտոնում, իր «Ցավ վասն տերության» («За державу обидно») գրքում գրում է. «Այն ժամանակ, 1988 թ. փետրվար-մարտ ամիսներին, գրվում էր ինչպես իմ կենսագրության, այնպես էլ հայրենիքի և օդադեսանտային զորքերի (ВДВ) պատմության անկանխատեսելի, անսպասելի, վայրենի, տեղ-տեղ արյունոտ, տեղ-տեղ ամենաստոր էջը: Ամենախուրն այն էր, որ ստորությունը, անազնվությունը, միջոցների մեջ խտրություն չդնելը գալիս էր մարդկանցից, ովքեր բարձրագույն պաշտոններ էին զբաղեցնում: Այնտեղ, վերևներում, նրանք հետապնդում էին միայն իրենց ինչ-որ բարձրագույն մարտավարական նպատակները, նույնիսկ սատանայի հետ ուզածդ գործարքներն էին կնքում, իսկ ներքևում, նրանց ցուցումով, նրանց ակտիվ մասնակցությամբ և կանխամտածված բացակայությամբ, ժողովուրդներ էին ընդհարվում, ընդլայնվում ու աճում էր արյունոտ «բեսպորեդել»-ը, դրվում էին պետության փլուզման ու կրախի հիմքերը... Աֆղանստանից հետո, Սումգայիթում, իմ հայրենի հողում (այն ժամանակ այդպես էի մտածում), ես առաջին անգամ նորից տեսա այրված բեռնատարներ ու ավտոբուսներ, այրվող տներ, մարդկանց՝ բնությունից սև, բայց սարսափից ճերմակած մազեր և աչքեր, աչքեր... Ամենուր միջնադարյան սադիզմի, գազանության, անմարդկային դաժանության գարշահոտ էր՝ առատորեն խառնված հիմարության հետ...»:

ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Գորբաչևը 1988 թվականի հուլիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում, անդրադառնալով սումգայիթյան իրադարձություններին, երկրով մեկ հայտարարեց. «Սումգայիթի ողբերգությունը չէր լինի, եթե զորքերը երեք ժամ չուշանային»:

Ի՞նչ երեք ժամվա մասին էր խոսքը, ինչո՞ւ էր այդքան ստորաբար ստում երկրի առաջին դեմքը: Չէ՞ որ 72 ժամ շարունակ, երեք օր անընդմեջ, զոր ու գիշեր տեղի էր ունենում հայերի ծրագրված ջարդ՝ ճիշտ այնպես, ինչպես դա արվեց 1915 թ. Օսմանյան կայսրությունում: Ոչնչացնում էին, կենդանի-կենդանի այրում, բռնաբարում, թալանում էին բացառապես ըստ ազգային պատկանելության: Որ Գորբաչևն այս ամենին տեղեկանում էր ամենահավաստի աղբյուրներից, կասկածից վեր էր: Դա է վկայում նաև «Խիստ գաղտնի» մակագրությամբ 1988 թվականի փետրվարի 29-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Քաղբյուրոյի նիստում հնչած ելույթների ամփոփագրային սղագրության կրկնօրինակը, որ գտնվում է ինձ մոտ: Որպես իրավաբան Գորբաչևը քաջ գիտակցում էր մանրամասների կարևորությունը: Եվ ահա նա մարշալ Յազովին հարցնում է.

- Պատմիր, Դմիտրի Տիմոֆեևիչ, ինչպե՞ս են սպանում:

Հետևում է մարշալի պատասխանը՝ առանց որևէ խմբագրության ու գրաքննության.



- Երկու կնոջ կուրծք էին կտրել, մեկ ուրիշի՝ գլուխը: Մի աղջկա էլ մորթազերծ են արել: Ահա այսպիսի վայրենություն: Մեր կուրսանտներն, այդ ամենը տեսնելով, ուշագնաց են լինում:

Հաջորդ օրերին, սակայն, ոչ թե այս փաստերն էին հրապարակվում, այլ կենտրոնական թերթերը միահամուռ գրում էին «Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջ» տեղի ունեցող իրադարձությունների, ժողովուրդների բարեկամության ու ազգամիջյան ամուսնությունների մասին: Ադրբեջանի ղեկավարներն անգամ գլուխները կորցրել էին անպատժելիության զգացումից: 1988-1989 թթ. Բաքվի հակահայկական հանրահավաքներում արդեն բացահայտ կոչեր էին հնչում՝ պետք է ողջ Ադրբեջանը, Նախիջևանը և Ղարաբաղը մաքրել հայերից, եթե չենք ուզում արժանանալ նրանց վրեժին: Եկեք այս կարգախոսը համեմատենք երիտթուրքական գաղափարախոսության ջատագովներից մեկի՝ Բեհաէդդին Շաքիրի հետևյալ մտքի հետ, որ նա արտահայտել է 1915 թ.՝ հայերի հրեշավոր ցեղասպանության ծրագրի քննարկման ժամանակ. «Մենք ստանձնում ենք մի կարևոր և ծանր պարտականություն և եթե այն մինչև վերջ չկատարենք, կարող եք վստահ լինել, մենք չենք խուսափի հայերի վրեժխնդրությունից»:

Տարբերություն գտնելն, իրոք, դժվար է:

- Պարոն Բալայան, խորհրդային երկրի ղեկավարների այս հրեշավոր սառնաարտությունն ու համահավասարեցման անթույլատրելի քաղաքականությունը, որքան էլ նրանց համար ցանկալի չլիներ, հանգեցնելու էր Խորհրդային Միության և այդ միությունը կազմավորած Ռուսաստանի նկատմամբ խիստ կասկածելի վերաբերմունքի ձևավորման ինչպես մյուս ազգերի, այնպես էլ հայ ժողովրդի մեջ: Այդ չե՞ն արդյոք վկայում այն հակախորհրդային և հակառուսական հայտարարությունները, որոնք, թեև թույլ, բայց այնուամենայնիվ տեղ գտան այն օրերի հայաստանյան հանրահավաքներում:

- Որպես ԽՍՀՄ վերջին խորհրդարանի պատգամավոր ես հաճախ եմ հանդիպել Գորբաչևի, Յակովլևի, Լուկյանովի, երկրի մյուս ղեկավարների հետ: Եվ ամեն անգամ համառորեն նրանց փորձել եմ համոզել, որ Սումգայիթի և «սումգայիթների» անպատժելիության ամենավտանգավոր հետևանքներից մեկն էլ այն է, որ ժողովուրդն արդեն խառնում ու մեկտեղում է «խորհրդային» և «ռուսական» հասկացությունները: Նրանց փորձել եմ բացատրել, որ եթե չդադարեցվեն կենտրոնական ՁԼՄ-ների սադրիչ հրապարակումները, պետական այրերի չմտածված հայտարարություններն ու խայտառակ դատավարությունները, եթե երկրում շարունակվեն «սումգայիթները», ապա, վաղ թե ուշ, կանգնելու ենք մի իրողության առջև, որ արյունահեղության համար մեղադրվելու են ռուսները, դեռ ավելին, պատասխանատվության բեռը դրվելու է հենց ռուսների վրա: Մեր այս կանխատեսումները, ցավոք, նույնպես իրականացան: Դա զգացվեց թե Երևանում, որ հակառուսական որևէ տրամադրություն կարելի էր կատարյալ անհեթեթություն համարել, թե Բաքվում և թե մեկը մյուսին հաջորդած «թեժ կետերում»: Բաքվում դեռ այսօր էլ ամեն տարի հունվարի 20-ին խորհրդային (ռուսական) բանակի զինվորներին, որոնց թեև ուշացումով, բայց այնուամենայնիվ հաջողվեց բռնել հանցագործների ձեռքն ու փրկել բազմաթիվ հայ ընտանիքների, հռչակում են «Ադրբեջանի ժողովրդավարության դահիճներ»:

Ահա թե ինչու էինք ձգտում Գորբաչևին և մյուսներին հասկացնել, որ իրենք «սումգայիթին» քաղաքական գնահատական տալուն այլընտրանք չունեն, որ ժամանակն է իրերն իրենց անուններով կոչել ու ընդունել, որ Սումգայիթում ցեղասպանություն է տեղի ունեցել: Գորբաչևի քաղաքական խիզախությունը, սակայն, բավարարեց միայն երկրով մեկ հայտարարելու, որ ցեղասպանությունը կազմակերպված հանցագործություն է, իսկ Սումգայիթում գործել է հասարակության տականքը: Ահա այսպես, 20-րդ դարի վերջին, նրա բարձր հովանու ներքո մարդկությունից թաքցվեց ցեղասպանության ևս մի դրսևորում: Եվ դա արեց մի երկրի ղեկավար, որը վավերացրել էր ՄԱԿ-ի հայտնի բանաձևը «ցեղասպանության հանցագործությունը նախազգուշացնելու և դրա համար պատասխանատվություն կրելու» մասին: Ի դեմ՝ այնտեղ հստակ ամրագրված է՝ բանաձևի տակ իրենց ստորագրությունը դրած պետությունները պարտավոր են կանխարգելել և պատժել հրեշավոր այդ դրսևորումը, միևնույն ժամանակ գիտակցելով, որ կոծտությունը տվյալ դեպքում ամենամեծ գթությունն է, իսկ անպատիժ մնացած չարիքը նոր չարիք է ծնում:

Հարցազրույցը վարեց՝ Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ

Ինչ է իրենից ներկայացնում «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը

Աշոտ Եղիազարյան

Դավոսյան վերջին համաշխարհային տնտեսական համաժողովի ժամանակ Եվրոպայի Միությունում նախագահող երկրի՝ Չեխիայի Նախագահ Վացլավ Կլաուսը Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանին պաշտոնապես հրավիրեց մասնակցելու մայիսի 7-ին Պրագայում անցկացվելիք «Արեւելյան գործընկերության» գագաթնաժողովին: Գագաթնաժողովում կքննարկվեն Եվրամիությանը Ուկրաինայի, Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Ադրբեջանի եւ, հնարավոր է, Բելառուսի քաղաքական եւ տնտեսական ինտեգրման հեռանկարները, այդ թվում՝ նրանց ասոցիացված անդամի կարգավիճակ տրամադրելու հնարավորությունը, մուտքի արտոնագրային ռեժիմների դյուրացման (նախատեսվում է ժամանակի ընթացքում այդ երկրների համար շենգենյան վիզան դարձնել անվճար, իսկ հետո՝ հնարավոր է, որ ընդհանրապես հանվի) եւ ազատ առեւտրի գոտիների ստեղծման հարցեր: Բելառուսի նախագահի մասնակցությունը գագաթնաժողովին առայժմ բաց է մնում, ինչը պայմանավորված է այդ երկրում ընթացող ժողովրդավարական գործընթացներով: Հավանաբար այդ հարցում հստակեցում կլինի առաջիկա մարտ-ապրիլ ամիսների ընթացքում: Ակնհայտ է, որ ԵՄ-ն Բելառուսն ընդգրկելով իր նախագծերում՝ ձգտում է խուսափել այդ երկրի մեկուսացումից:

Նախատեսվում է «Արեւելյան գործընկերությունը» զարգացնել չորս հիմնական ուղղություններով. 1) ժողովրդավարություն, արդյունավետ կառավարում եւ կայունություն, 2) տնտեսական ինտեգրացում եւ ԵՄ-ի քաղաքական կուրսին մերձեցում, 3) էներգետիկ անվտանգություն, 4) շփումներ քաղաքացիների միջեւ:

Ի տարբերություն Եվրոպական հարեւանության քաղաքականության, որը համագործակցության տեխնիկական ծրագիր էր եւ պարունակում էր ընդամենը եվրոպական համերաշխության ուղերձ, «Արեւելյան գործընկերությունը» ենթադրում է ավելի ակտիվ շփում քաղաքական մակարդակում, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձեւաչափերով: Եվրոպական հարեւանության քաղաքականության շրջանակներում, բացի Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից եւ Բելառուսից, ընդգրկված են նաեւ Հյուսիսային Աֆրիկայի եւ Մերձավոր Արեւելքի մի շարք պետություններ՝ Ալժիրը, Մարոկկոն, Լիբիան, Թունիսը, Իսրայելը, Պաղեստինը, Սիրիան,



Հորդանանը, Լիբանանը եւ Եգիպտոսը: Այդ երկրները իրենց հարաբերությունները Բրյուսելի հետ փորձում են ստեղծել տարբեր արագությամբ եւ, որ գլխավորն է՝ տարբեր նպատակներով, ինչը հնարավոր չի դարձնում արդյունավետ համագործակցությունը: Կարելի է ասել, որ այդ պատճառով առաջացած բոլոր հակասությունները եւ անորոշությունները ըստ էության հանգեցրել են Եվրոպական հարեւանության քաղաքականության ձախողմանը:

Արեւելյան գործընկերության շրջանակներում ԵՄ-ն պատրաստ է Ասոցիացման համաձայնագրեր առաջարկել դրան ձգտող գործընկերներին՝ փոխարինելով ներկայիս Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրերը: Արեւելյան գործընկերության շրջանակներում նույնպես ԵՄ-ն շարունակելու է կիրառել տարբերակված մոտեցում: Համաձայնագրերը մշակվելու են յուրաքանչյուր պետության պատրաստվածությանն ու իրավիճակին համապատասխան: Համաձայնագրերն ունենալու են նաեւ ԵՄ ընդհանուր արտաքին եւ անվտանգության քաղաքականության, Եվրոպական պաշտպանության եւ անվտանգության քաղաքականության շուրջ համագործակցության բաղադրիչներ:

Արեւելյան գործընկերության ծրագիրը ԵՄ-ում նախագահելու ժամանակաշրջանում Չեխիայի կողմից որոշված երեք գերակա ոլորտներից մեկն է: Դրանք տնտեսության, էներգետիկայի եւ «Եվրոպան աշխարհում» հարցերն են: Հնարավոր է, որ մինչեւ գազաքնաժողովի հրավիրումը տեղի ունենա էներգետիկ անվտանգության Հարավային միջանցքի հարցով գագաքնաժողով: Եվ հնարավոր է, որ կարգ ստեղծվի երկու նիստերի միջեւ: Արեւելյան գործընկերության շրջանակներում Բրյուսելը մտադիր է Եվրոպական էներգետիկ հանրություն (ԵԷՀ) ընդունել Ուկրաինային եւ Մոլդովային, անցկացնել հատուկ կոնֆերանս՝ ուկրաինական գազամուղների համակարգի արդիականացման համար միջոցներ հավաքելու նպատակով, եւ «փոխըմբռնման հուշագրեր» ստորագրել Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի ու ԵԷՀ միջեւ: ԵԷՀ-ն հիմնադրվել է 2005 թ.՝ Բալկաններում էներգահոսանքների վերահսկման համար: Բացի ԵՄ-ից այդ կազմակերպության անդամներ են Ալբանիան, Խորվաթիան, Բոսնիա-Հերցեգովինան, Մակեդոնիան, Չեռնոգորիան եւ Կոսովոն: Այդ հանրու-

թյան անդամները միմյանց հետ կապված են էներգակիրների առուտրի եւ տարանցման կանոնների մասին պայմանագրերով: Մի շարք վերլուծաբանների կարծիքով Եվրամիության էներգետիկ անվտանգության ապահովումը Ռուսաստանը շրջանցող ածխաջրածնային տրանզիտի ստեղծման միջոցով, ինչպես ԵԷՀ, այնպես էլ Արեւելյան գործընկերության հիմնական նպատակն է: Մեր կարծիքով, դա շատ նեղ մոտեցում է:

ԵՄ-ն տնտեսական հսկա է, որն ավելի ու ավելի շատ է վերածվում քաղաքական խաղացողի եւ փորձում է իր վրա վերցնել համապատասխան պարտավորություններ: Ներկայումս Եվրոպան միասնական արտաքին քաղաքականության մշակման փնտրտուքների մեջ է:

Դեռեւս անցած տարի Ֆրանսիայի Նախագահ Նիկոլա Սարկոզիի կողմից առաջարկվեց «Միջերկրածովյան միություն» ծրագիրը: Դա ունիկալ միություն է այն իմաստով, որ դրա մեջ մտնում են արաբական, իսլամական եւ քրիստոնեական երկրներ: Գերմանիան սկզբում դեմ էր ֆրանսիական նախաձեռնությանը, համարելով այն չափազանց լայն, չափազանց հավակնոտ եւ չափազանց ֆրանսիական: Որոշ գերմանացի քաղաքական գործիչներ դրա մեջ փորձեցին տեսնել նաեւ ֆրանսիական գաղութատիրական հավակնությունների վերականգնման փորձ:

Արեւելյան գործընկերությունը կարծես թե եկավ լրացնելու Միջերկրածովյան միությանը՝ այսպիսով հստակ ցուցադրելով Եվրամիության արեւելյան եւ հարավային քաղաքականությունները: Արեւելյան գործընկերության ծրագիրն ուղղված է դեպի արեւելք: Կովկասում Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ տեղի ունեցած հակամարտությունը ստիպեց, որպեսզի Եվրոպական Հանձնաժողովը ժամկետից ավելի վաղ քննարկի ծրագրի կյանքի կոչման հարցը:

Արեւելյան գործընկերության ծրագիրը անցած տարվա հունիսին նախաձեռնել են Լեհաստանը եւ Շվեդիան եւ արդեն դեկտեմբերի 12-ին Բրյուսելում տեղի ունեցած գագաթնաժողովում այն հաստատվել է ԵՄ 27 երկրների կողմից: Չնայած «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը առաջարկել են Լեհաստանը եւ Շվեդիան, դա ամենեւին չի խոսում այն մասին, թե այդ գաղափարը ելնում է միայն այդ երկու երկրներից: Իհարկե, գոյություն ունի Արեւելյան Եվրոպայի «լեհական նախագիծ», բայց տվյալ դեպքում ծրագրի գաղափարը «գերմանական նախագիծ» է, որի միջոցով Լեհաստանը փորձում է հետաքրքրել իր ուրույն շահերը եւ միաժամանակ ցուցադրել իր կարեւորությունը Եվրոպայի գործերում: Ծրագրի մշակմանը եւ առաջարկմանը Շվեդիայի մասնակցությունը նույնպես վկայում է դրա գերմանական բովանդակության մասին: Շվեդիան արդեն ավելի քան հարյուր տարի միանշանակ հայտնի է որպես գերմանական քաղաքականության հետեւորդ: Այդուհանդերձ, այս ծրագիրը մեծ հաշվով կարելի է համարել համաեվրոպական, եթե հաշվի չառնենք Մեծ Բրիտանիային: Այն դեպքում, երբ Ֆրանսիայի ձգտումները միջերկրածովյան ուղղությամբ այնքան էլ բծախնդրորեն համաձայնեցված չեն համաեվրոպական շահերի հետ, Բրյուսելի քաղաքականությունն արեւելյան ուղղությամբ շատ ավելի ներդաշնակ է ԵՄ բոլոր երկրների շահերին: Եվրոպացիները արեւելքում գտնվող երկրների մասին, ի տարբերություն հարավի հարեւանների, դիտում են ոչ թե պարզապես Եվրոպայի հարեւաններ, այլ հարեւան եվրոպացիներ:

Բրյուսելում հասկանում են, որ վերջին շրջանում այդ հետխորհրդային տարածաշրջանն ավելի շատ եղել է ամերիկա-բրիտանական եւ ռուսական ազդեցությունների ոլորտում՝ դուրս թողնելով իրեն տեղի գործընթացներից, եւ ժամանակն է ավելի ակտիվ դերակատարություն ունենալ այս պետությունների կյանքում: Արեւելյան ուղղությամբ արտաքին քաղաքականությունը Գերմանիայի համար հիմնական է, իսկ այդ տարածքները՝ կենսական՝ «գերմանական տնտեսական կայունության» ստեղծման համար: Միայն այդ ճանապարհով եւ Ռուսաստանի բնական ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն ունենալու միջոցով Գերմանիան կարող է դուրս գալ ներկա աշխարհաքաղաքական մեկուսացումից:

Ըստ եվրոպական մամուլում տարածված տեսակետների, «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը զգալի ազդեցություն կունենա Ռուսաստանի վրա, որն այդ երկրներին դիտում է որպես բացառապես իր ազդեցության տարածք: Սակայն եվրոպացիները պնդում են նաեւ, որ «Արեւելյան գործընկերություն» ծրագիրը ոչ մի կերպ ուղղված չէ Ռուսաստանի դեմ եւ չի էլ կարող այդպիսի նպատակ ունենալ, քանի որ ԵՄ երկրներից շատերը Ռուսաստանին դիտում են որ-

ոլես կարեւոր գործընկեր, հետեւաբար չեն գնա Մոսկվայի հետ հարաբերությունների վատթարացման ճանապարհով: Ծրագիրն, իհարկե, ուղղված չէ Ռուսաստանի դեմ: Սակայն Մոսկվան ունի այդ երկրների ինտեգրման իր պլանները, եւ այս առումով առաջանում է հակասություն: Ավելի որոշակի՝ ԵՄ նոր նախաձեռնությունը համահունչ չէ նախկին Խորհրդային Միության երկրների տարածքում ընդհանուր տնտեսական տարածք ձեւավորելու Ռուսաստանի ձգտումներին: Ռուսաստանը փորձում է նոր շունչ հաղորդել ԱՊՀ-ին, իսկ «Արեւելյան գործընկերություն» ծրագրում ընդգրկված 6 նախկին խորհրդային հանրապետություններից 5-ը այդ կազմակերպության անդամներ են: Ռուսաստանն ընդգրկված չէ գործընկերության ծրագրում, իսկ այդ երկրները Եվրամիության դաշտում ինտեգրվելու դեպքում իր համար կդառնան օտարացած: Ահա թե ինչու ԵՄ նոր նախաձեռնությանը Ռուսաստանում նայում են կասկածամտորեն՝ ենթադրություններ անելով դրա հնարավոր «հակառուսական» ուղղվածության մասին: Ըստ ռուսական ԶԼՄ-ներում տարածված կարծիքի, Արեւմտյան Եվրոպան վաղուց փորձում է դուրս գալ ռուսական էներգետիկ կախվածությունից, որի համար նրան անհրաժեշտ է ամրապնդել իր կապերը Սեւծովյան-կասպյան տարածաշրջանում: Որոշ հրապարակումներում փորձ է արվում առաջ քաշել ավելի լուրջ մոտեցումներ՝ շեշտելով, թե հարցը միայն էներգակիրները չեն, այլ տարածաշրջանում որպես հիմնական խաղացող հանդես գալու Բրյուսելի ձգտումները: Ռուսներին մտահոգում է այն փաստը, որ եթե Արեւելյան գործընկերության ծրագրի նախնական տարբերակում ամրագրված էր դրույթ, որի համաձայն նախագիծը պետք էր դիտարկել իբրեւ լրացում Եվրամիություն-Ռուսաստան հարաբերություններին, ապա հետագայում այս դրույթը փոխվեց եւ ամրագրվեց այսպես. Արեւելյան գործընկերության նախագիծը կիրականացվի Ռուսաստան-Եվրամիություն ռազմավարական համագործակցության նախագծին զուգահեռ:

Սովորաբար ԶԼՄ-ներում գերագնահատված են ներկայացվում այդ տարածքները յուրացնելու Ռուսաստանի հնարավորությունները, ինչի պատճառով տպավորություն է ստեղծվում, թե ԵՄ-ն իր կենսական տարածությունն ընդլայնում է ռուսականի հաշվին: Սակայն, գաղտնիք չէ, որ սեփական տնտեսությունն արդիականացնելու համար Ռուսաստանն ինքը գերմանական ներդրումների ու տեխնոլոգիաների կարիքն ունի: Հատկանշական է, որ նախաձեռնության սկզբում խոսք էր գնում նաեւ Արեւելյան գործընկերության ծրագրում Ռուսաստանին ընդգրկելու մասին, ինչից եվրոպացիները հետո միայն հրաժարվեցին: Իսկ քարոզչական այդ արշավը խոսում է ընդամենը տեղեկատվական դաշտում ամերիկա-բրիտանական դիրքերի միանշանակ առավելության փաստի օգտին: Իրականում այդ տարածքների համար ազդեցության պայքարն ընթանում է Գերմանիայի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ: Այս առումով Մեծ Բրիտանիայի շահերը ասոցիացվում են Եվրասիայում ԱՄՆ-ի ռազմավարական շահերի հետ: Ամերիկա-բրիտանական ռազմավարությունը այդ տարածաշրջանը դիտում է որպես պատնեշ Եվրոպայի եւ Ռուսաստանի միջեւ:

Ներկայումս Բրյուսելն ընտրել է տարածաշրջանում դանդաղ ազդեցություն ունենալու ճանապարհը: Ըստ Եվրահանձնաժողովի նախագահ Բարրոզոյի, Արեւելյան գործընկերության քաղաքականությունը «փափուկ ուժի» դրսեւորում է: Անդամակցությունը ԵՄ-ին արեւելաեվրոպական գործընկերների համար դեռեւս շատ հեռու է, իսկ շատերի համար գուցեեւ անհասանելի: Շատ սուղ են նաեւ ծրագրի համար նախատեսված միջոցները: Ներկա պահին Եվրոպական Հանձնաժողովը հայտնի է դարձրել իր մտադրությունը՝ 2010-2013 թթ.-ին տրամադրել 350 մլն. եվրո բոլոր գործընկեր երկրների համար: Նույն ժամանակահատվածում եւս 250 մլն. դոլար տրամադրվելու է Արեւելյան գործընկերության բազմակողմ համագործակցության ֆինանսավորման համար: Այսպիսի պայմաններում «Արեւելյան գործընկերություն» ծրագիրն առայժմ ավելի շատ նման է մտադրությունների հռչակագրի, իսկ դրա իրագործումը շատ կողմերով կախված է լինելու ծրագրում ընդգրկված պետությունների ցանկություններից կամ ձգտումներից եւ ոչ միայն եվրոպացիների ցանկությունից կամ հատկացրած միջոցներից:

Այսպիսով՝ պայքարը Արեւելյան Եվրոպայում ազդեցության համար ոչ միայն ավարտված չէ, այլեւ նոր երանգներ է ստանում: Այն հանգամանքը, որ Ղարաբաղի խնդիրը չի կապվում Գործընկերության ծրագրի իրականացման հետ, Հայաստանի համար վատ սկիզբ չէ:

Ժողովրդավարության փորձը Հայաստանում.

հարցադրումներ

Սիւզան Խարտալեան



Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության (ԱԱՌ) գնահատումով՝ *«Ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքներն են՝ պետական կառավարման համակարգի արդյունավետությունը, իրավունքի գերակայության ապահովումը, ժողովրդավարական արժեքների արմատավորումը»:* Նոյն ռազմավարութիւնը ներքին

սպառնալիքներու ենթախորագրին տակ կ'ընէ հետեւեալ ախտաճանաչումը. «*20-րդ դարի վերջին վերականգնելով իր անկախությունը՝ Հայաստանի Հանրապետությունը դեռևս պահպանում է անցումային ժամանակաշրջանին բնորոշ կերպափոխման առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված են հիմնական ներքին սպառնալիքները*»:

...«*Անցումային շրջանում գտնվող պետություններում վտանգված են ժողովրդավարական համակարգի հարատևությունն ու արդյունավետությունը: Անմիջական սպառնալիքներ են՝ մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգի ձևավորումը, ընտրական գործընթացներում առկա թերությունները, քաղաքացիական հասարակության ոչ բավարար ներգրավվածությունը*»:

Ստորեւ պիտի փորձեմ վեր առնել ԱԱ ռազմավարութեան գնահատականներուն մէջ հնչող ժողովրդավարութեան համակարգի յարատեւութիւն, արդիւնաւէտութիւն, ընտրական գործընթացներ, քաղաքացիական հասարակութիւն տերմինները: Նպատակը քննարկումն է արդի ժողովրդավարութեան ընդհանուր իմաստին կապուած վերոնշեալ կոնցեպտների, եւ այդ քննարկումը կատարել՝ խուսափելով առաջին հերթին ժողովրդավարութիւնը նոյնացնելէ որոշակի կանոններու եւ հաստատութիւններու հաւաքածոյի մը հետ եւ երկրորդ՝ զայն սահմանափակել իւրայատուկ մի մշակոյթով կամ տուեալ երկրի մը զարգացման մակարդակով:

Երկրորդ մասով պիտի աշխատիմ ապացուցել, որ այն կարելի չէ պարզեցնել եւ նոյնացնել հերթական ընտրութիւններու կայացումի հետ եւ կամ հաւասարեցնել պետութեան դերակատարութեան ինչ-որ մի հասկացողութեան հետ:

Վերջում նաեւ պիտի փորձեմ պարզել, թէ ժողովրդավարութիւնն *ինչ չէ*, քննարկել ժողովրդավարութենէն մեր ակնկալութիւնները եւ յստակեցնել, թէ ժողովրդավարութիւնը ինչ կրնայ եւ յատկապէս ինչ չի կրնար արտադրել:

Ինչ է ժողովրդավարութիւնը

Այս աշխատանքի հիմնական թեզն այն է, որ ժողովրդավարութիւնը բաղկացած չէ հասարակական ինստիտուտներու *եզակի մէկ կազմով*. կան ժողովրդավարութեան տարբեր տիպաստեսակներ, եւ այդ ժողովրդավարութեան տարբերակներու կիրարկումը բնականաբար կը յանգի տարբեր արդիւնքներու: Թէ ժողովրդավարութիւնը ինչ ձեւ կը ստանայ՝ կախեալ է ոչ միայն երկրի մը հասարակական-տնտեսական պայմաններէն, այլ նաեւ պետական կառոյցներու կայացման աստիճանէն, քաղաքականութիւն վարելու պրակտիկայէն:

Արդիական քաղաքական ժողովրդավարութիւնը կառավարման համակարգ մըն է, ուր կառավարողները հաշուետուութեան կը կանչուին քաղաքացիներու կողմէ հանրային կեանքէն ներս իրենց բոլոր արարքներուն համար: Քաղաքացիներն այդ հաշուետուութիւնը կը կատարեն անուղղակիօրէն՝ իրենց կողմէ ընտրուած ներկայացուցիչներու միջեւ կայանալիք մրցակցութեան եւ կամ համագործակցութեան ընդմէջէն:

Կառավարման որեւէ համակարգ խորքին մէջ կաղապարներու մէկ փաթեթ է, որ կը ճշդորոշէ հետեւեալները.

1) հանրային պատասխանատուութիւններու հասնելու մեթոտները,

2) քաղաքական դերակատարներու այն յատկութիւնները, որոնք քաղաքացիին/թեկնածուին կը հրամցնեն հանրային դիրքերու հասանելիութեան հնարաւորութիւն եւ կամ հակառակը՝ այդ հասանելիութեան անհնարաւորութիւն,

3) այն ռազմավարութիւնը, որ դերակատարները կարող են օգտագործել հասանելիութիւն ապահովելու համար,

4) այն օրէնքները, որ անհրաժեշտ է յարգել հանրութեան առընչուող եւ պարտաւորեցնող որոշումներու կայացման պարագային:

Որպէսզի աշխատանքը ճիշդ հունի մէջ դրուի, վերեւ նշուած կառավարման համակարգը, անշուշտ, պէտք է վերածուի հաստատութիւններու: Այսինքն վերը նշուած իրաւանչիր կէտ պիտի լաւագոյն ծանօթ ըլլայ, գործնականացուի եւ ըն- դունուի քաղաքական բոլոր դերակատարներու կողմէ:

Հայաստանի պարագային, ժամանակի ընթացքին ինստիտուտականացումի մեր նախընտրած մեխանիզմը դարձաւ գրաւոր օրէնքներու մի մարմին՝ իր կարգին ուժեղացուած գրաւոր սահմանադրութեամբ, սակայն զուգահեռաբար պահուեցան քաղաքական անպաշտօն եւ աւանդական բնոյթի շարք մը կանոններ: Անցումային երկիրներու ժողովրդավարութեան փորձը, որոնց կարգին մեր երկիրը, ակադեմական շրջանակներու քննարկումներուն առանցքը դարձաւ մօտ երկու տասնամեակ: Աշխատանքի հետեւութեան համար, ինչպէս նաեւ բաղ-

դասական անցկացնելու միտումով, ժողովրդավարութեան տարբերակները այդ շրջանակներու կողմէ ստացան իւրայատուկ պիտակներ:

Այսպէս. ժողովրդավարական էր միայն մին, մինչ միւսները կոչուեցան ինքնակալական, բռնակալական, դիկտատորական, բռնապետական, ամբողջատիրական, աւանդական, միապետական, օլիգարխական, միահեծանութիւն, բացարձակապետութիւն, պլուտո- կրատական, արիստոկրատական, եւայլն: Ռէժիմի այս տարբերակներէն իւրաքանչիւրը անշուշտ հնարաւոր էր իր կարգին մասնատել, ստորադասել: Բայց առայժմ այդ մասին չխօսենք:

Ուրեմն նախ մօտէն նայինք ժողովրդավարութեան առընչուող կարգ մը բառերու, ինչպիսիք են՝ ղեկավար, հանրային բնագաւառ, քաղաքացի... ինչ լինելը:

Ղեկավարներ. ինչպէս բոլոր ռէժիմները, ժողովրդավարութիւնը եւս կախեալ է իշխողներէն, այն անձերէն, որոնք իշխանութեան մէջ մասնագիտացած դերեր կը գրաւեն եւ կարող են օրինական տնօրինումներ կատարել, հրահանգել այլ մարդկանց:

Ժողովրդավար իշխանաւորը, ղեկավարը միւս՝ ոչ-ժողովրդավար ղեկավարներէն կը տարբերի այն բանով, որ ան պարտադրուած է հետեւելու այն կանոններուն, որոնք կը ճշդեն, թէ ինչպէս ղեկավար մը կը հասնի իշխանութեան, թէ որոնք են այն գործառոյթները, որոնք հնարաւոր կը դարձնեն խնդրոյ առարկայ ղեկավարը հաշուետուութեան կանչել:

Հանրայինը այն բնագաւառն է, որ իր մէջ կը պարփակէ հաւաքական կանոններ եւ անհատական ընտրումներ: Կանոնները պարտադրեցուցիչ են բոլորին համար եւ կը պաշտպանուին պետութեան կողմէ, ի հարկին ուժի հարկադրումով:

Հանրայինի բաղադրիչ հաւաքականի եւ անհատականի համեմատութիւնները կրնան մեծ չափով տարուբերիլ՝ նայած որ ինչ ռէժիմի մասին է խօսքը: Այդ վարիացիան կախեալ է որոշ յարաբերակցութիւններէ, որոնց շարքին են հանրայինի եւ անհատականի միջեւ նախորոշ առկայ տարբերութիւնները, պետութեան եւ հասարակութեան կարերը, ուժի օրինական օգտագործման եւ յօժարակամ երկխօսութեան յարաբերակցութիւնը, եւ վերջապէս հաւաքական կարիքներու եւ անհատական նախասիրութիւններու միջեւ հակադրութիւնները:

Օրինակով խօսելու համար, ժող-ովրդավարութեան ազատական ըմբռնումը կը ջատագովէ հանրային բնագաւառի շրջանցումը ինչքան որ հնարաւոր է նեղ միջոցով, մինչդեռ ընկերվարական կամ ընկերվարժողովրդավարական մօտեցումը կ'աշխատի հնարաւորին չափ ընդլայնել հանրային բնագաւառը՝ օգտագործելով տարբեր միջոցներ, ինչպիսին են յաւելեալ կանոնագրութիւնը, սուբսիտացիան, եւ որոշ պարագաներու ունեցուածքի հաւաքական սեփականատիրութիւնը: Տեղին է մէջբերել հայկական ազատական տնտեսութեան մասին ԱԱՌ-ում ամրագրուած հետեւեալ տեքստը. «*Նպատակներն են՝ տնտեսության կայուն աճը, մանր եւ միջին գործարարության զարգացումը, էներգետիկ անկախությունը, գործարարության համար առավել* **ազատական պայմանների ստեղծումը,** *մասնավոր սեփականության հանդեպ հարգանքն ու ձեռնարկատիրական ջիղը պատմականորեն բնորոշ են Հայաստանի բնակչությանը*» (ընդգծումներն իմն են): Հետաքրքրական է նաեւ այն, որ ԱԱՌ ներքին անվտանգութեան context-ին մէջ ազատական տնտեսութեան պայմաններու ստեղծումը կը շաղկապուի «ժողովրդավարական հասարակութեան կայացման» նպատակին հետ: Այսինքն մենք կը հաւատանք, որ ազատական տնտեսութիւնը իր հետ կը բերէ ժողովրդավարութիւն եւ հասարակութեան կայունացում:

Ինքնըստինքեան ոչ ազատական եւ ոչ ալ ընկերվարական աշխարհահայեացքները մէկը միւսէն աւելի ժողովրդավար են - այլ պարզապէս *տարբերէն* ժողովրդավար: Այս ճշդումը կ'ենթադրէ, որ այն միջոցառումները, որոնք նպատակ ունին *զարգացնելու մասնաւոր սեկտորը,* աւելի ժողովրդավար չեն, քան այն միջոցառումները, որոնք կը միտին զարգացնելու *հանրային սեկտորը:*

Ծայրայեղութեան պարագային երկուքն ալ կրնան վտանգել ժողովրդավարութեան իրագործման հիմքերը, առաջինը՝ քանդելով հաւաքական կարիքները՝ գոհացնելու եւ օրինականութենէն օգտուելու իրաւունքի հիմքը, իսկ երկրորդը՝ քայքայելով մասնաւոր/անհատական նախասիրութիւնները գոհացնելու նոյնքան կարեւոր հիմքը, միաժամանակ կառավարութեան վերապահելով ոչ օրինական ակցիաներու մենաշնորհը:

Կը մնայ *օպտիմալ* խառնուրդ առաջացնելու խնդիրը: Եւ հենց այս գծով տեսակէտներու այլազանութիւնն է, որ հիմք կրնայ դառնալ կայացած ժողովրդավարութեան, հասարակութեան մը, որու յարկին տակ եռացող քաղաքական հակամարտութիւնները

կ'ունենան ինքնուրոյն բովանդակութիւն եւ դատաձեւ լուծում:

Քաղաքացիներ. ժողովրդավարութիւններու ամէնէն բնորոշ տարրը *քաղաքացիներն* են: Բոլոր ռէժիմները ունին իշխողներ եւ հանրային բնագաւառ: Սակայն միայն ժողովրդավարութիւնները ունին *քաղաքացիներ:* Դասմականօրէն *քաղաքացիութեան շուրջ* խիստ սահմանափակումներ կը դարսադրուէին գրեթէ բոլոր մասնակի կամ emerging ժողովրդավարութիւններու մէջ, տարիքի, սեռի, գրագիտութեան, ունեցուածքի եւ սեփականութեան, հարկ վճարելու եւ այլ չափանիշներու հիման վրայ: Բնակչութեան միայն փոքր մասը իրաւունք ունէր ընտրելու կամ ընտրուելու: Միայն սահմանափակ հասարակական կատեգորիաներու արտօնուած էր կազմակերպուիլ, կազմակերպել, միանալ կամ աջակցիլ քաղաքական խմբակցութիւններու:

Երկարատեւ դայքարէ յետոյ միայն, որոշ դարագաներու ներքին ըմբոստութիւններու կամ միջազգային դատերազմի գնով, այս սահմանափակումներու մեծ մասը վերացուեցան: Այսօր, հասարակութեան բոլոր մասերի ներառումը արդէն կը համարուի ժողովրդավարութեան կայացած չափանիշ: Երկրում ծնուած իրաւանչիր մեծահասակ քաղաքացի ունի եւ ընտրելու, եւ թէ ընտրուելու իրաւունք:

Քաղաքացիներու իրաւունքները սահմանափակելու հարցին շուրջ կարեւոր է ընդգծել մէկ իրողութիւն: Ամերիկեան եւ Եւրոպական 19-րդ դարի կանուխ ժողովրդավարութիւններուն ի տարբերութիւն վերջին տասնամեակներու ծնունդ առած Հարաւային Եւրոպայի, Լատին Ամերիկայի, Ասիոյ, Արեւելեան Եւրոպայի նոր ժողովրդավարութիւնները չփորձեցին նոյնիսկ քաղաքացիներուն դարսադրել այնքիսի սահմանափակումներ, ինչքիսիք են ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը: Սակայն քաղաքացիութեան մեր դատմութիւնը ամբողջովին կը տարբերի Ամերիկեանէն եւ Եւրոպականէն ինչ կը վերաբերի իրաւունքներու էֆեկտիւ դրակտիկային: Այս հիմնական տարբերութիւնը իր կարգին անհրաժեշտ կը դարձնէ որոշ գործընթացներու առանցքային կարեւորութիւնը: Ստորեւ կը քննարկենք մրցակցութիւն, ընտրութիւններ, մեծամասնութեան իշխանութիւն, համագործակցութիւն, քաղաքացիական հասարակութիւն եւ ներկայացուցիչ տերմինները:

Մրցակցութիւնը միշտ չէ որ կը համարուի ժողովրդավարութեան կենսական դայմաններէն մէկը: Հակառակ անոր, որ դասական ժողովրդավարութիւնները որոշում կայացնելու գործընթացը կը տեսնեն ուղղակի մասնակցութեան մէջ, այդ մասնակցութիւնը դայմանական է, այն դիտի առաջնորդէ համախոհութեան: Քաղաքացիներէն կ'ակնկալուի գործընթացի մը շուրջ համաձայնիլ՝ լսելէ ետք այլընտրանքներն ու կշռադատելէ ետք իւրաքանչիւրի արժանիքներն ու թերութիւնները:

Կուսակցութիւններու, խմբաւորումներու, ինչդէս նաեւ մասնաւոր շահերու դէմ հակադրութեան աւանդութիւնը կը շարունակէ կարեւոր տեղ գրաւել ժողովրդավարութեան մտածողութեան մէջ, սակայն նաեւ խմբաւորումներու միջեւ մրցակցութիւնը ընդունուած երեւոյթ դիտի նկատել եթէ ժողովրդավարութիւնը դիտի գործէ ոչ միայն տեղական մակարդակի վրայ: Վերջ ի վերջոյ, այլախոհութեան թաքուն ծիլերը մարդ արարածի բնութեան անքակտելի մասն են: Որեւէ բուժման փորձ կամ մտայնութեան վերացում բազմադատիկ անգամ ավելի վտանգաւոր է, քան ինքը այլախոհութիւնը: Լուծման լաւագոյն ձեւը կը մնայ այլախոհութեան ճանաչման մէջ եւ անոր տոն տուող դատճառներու եւ հետեւանքներու վերացումի անխոնջ գործին մէջ:

Եթէ ժողովրդավարականներ կարող են համաձայնիլ այլախոհութեան եւ խմբաւորումներու



անխուսափելիության շուրջ, ապա չեն կրնար չհամաձայնիլ մրցակցության վրայ հիմնուած կառավարման ձեւերուն եւ կանոններուն շուրջ: Արդարեւ, կառավարման եղանակի շուրջ մօտեցումի տարբերութիւնները եւ մրցակցութեան սահմանագծերու յստակեցումը այն նրբութիւններն են, որ մէկ ժողովրդավարութիւնը կը զատորոշեն միւսէն:

Ընտրութիւններ (Ժողովրդավարութեան ամէնէն հանրածանօթ սահմանումը կ'ընդգծէ *ընտրութիւններու* անփոխարինելիութիւնն ու կարեւորութիւնը): Արդար ընտրութիւններ եւ ազնիւ հաշումներ ձեռք ձեռքի կ'երթան: Որոշներու համար *ընտրութիւններու կայացումը* ինքնին, նոյնիսկ եթէ որոշ կուսակցութիւններ եւ կամ թեկնածուներ դուրս կը պահուին մրցակցութենէն, *բաւարար եւ լրացուցիչ պայման* կը համարեն ժողովրդավարութեան կայացման համար: Այս մօտեցումը կը կոչուի «electoralism», որու համաձայն սոսկ ընտրութիւններու կայացումը ինքնըստինքեան կը նպաստէ, որ քաղաքական ընտրանիին ակցիաները ուղղորդուին դէպի խաղաղ մրցակցութիւն: Դեռ աւելին, ըստ «electoralism»ին ընտրութիւններու անցկացումը իր հետ կը բերէ երկրորդ մէկ առաւելութիւն՝ *յաղթանակած կողմին* կ'ապահովէ օրինականութիւն, վաւերացուած հանրութեան կողմէ, եւ սա անկախ ընտրութիւններու որակի խնդրէն: Հարցադրումները, ինչպիսին են՝ ի՞նչպէս կայացան այդ ընտրութիւնները եւ կամ ի՞նչպիսի սահմանափակումներ կիրառուեցան, որոնք նպաստեցին յաղթանակող կողմին, անկարեւոր են: Հայաստանի մէջ այս գործընթացին ականատես եղանք կրկնակի անգամներ, տեղական, խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններու հարթակին վրայ:

Որքան ալ ընտրութիւնները հիմնական են ժողովրդավարութեան մը համար, պէտք է յիշել, որ այդ ընտրութիւնները տեղի կ'ունենան ընդմիջումներով (ընդհատում) եւ քաղաքացիներուն կ'արտօնեն ընտրութիւն կատարել քաղաքական կուսակցութիւններու կողմէ հրամցուած, կուտակուած այլընտրանքային տրցակներու միջեւ: Այդ այլընտրանքները Հայաստանի նման անցումային ժողովրդավարութիւններէ ներս ոչ միայն բազմաթիւ են, այլեւ շփոթեցնող իրենց բազմա-բովանդակութեամբ: Միւս կողմէ՝ կացութիւնը մասնակի դարմանելու հնարաւորութիւններ, այլընտրանքային ճանապարհներ կան: Ընտրութիւններու միջեւ ինկող ժամանակահատուածներուն քաղաքացիները կարող են հանրային քաղաքականութեան վրայ ներգործել կամ գոնէ ազդեցութիւն բանեցնել մի շարք այլ միջնորդներու ճամբով, ինչպիսիք են տեղային խմբաւորումները, շահերի շուրջ համատեղուած կազմակերպութիւնները, սոցիալական շարժումները, եւայլն: Ուրիշ հարց է, թէ ի՞նչ չափով այդ ճանապարհները ճիշդ են օգտագործում: Այս մասին կ'անդրադառնամ աւելի ուշ:

Յամենայն դէպս, արդիական ժողովրդավարութիւնը կը հրամցնէ մրցակցական այլազան պրոցեսներ եւ շահերու ու արժէքներու արտայայտման տարբեր քանալներ՝ կուսակցական կամ ասոցիական, ֆունկցիոնալ կամ տարածքային, հաւաքական կամ անհատական: Բոլորը անբաժանելի, բոլորը մասնակից ժողովրդավարութեան պրակտիկային:

Մեծամասնութեան իշխանութիւն. (Ժողովրդավարութեան մի այլ ընդունուած յատկանիշ ժողովրդավարութիւնը կը նոյնացնէ *մեծամասնութեան իշխանութեան* հետ): Որեւէ կառավարող մարմին ժողովրդավարական կը համարուի, եթէ որոշումները կը կայացուին իրաւասու ձայներու 50 տոկոսի հաշ- ուարկով, անկախ այն բանէն՝ այդ մեծամասնութիւնը կը գոյանայ խոր-հրդարանէն ներս, թէ յանձնախումբէ մը ներս, քաղաքային խորհուրդին կամ կուսակցական խմբաւորումի մը մօտ: Բացառիկ պարագաներու եւ նպատակներու համար (օրինակ՝ սահմանադրութեան բարեփոխում, կամ գործիչի մը արտաքսում), հաւանաբար անհրաժեշտ է ձայներու 50 տոկոսէն աւելին ապահովել: Սակայն նաեւ ոչ ոք կ'ակնկալէ, որ ժողովրդավարութիւն մը հաւասար չափով եւ միաժամանակ ցոլացնէ բոլոր անհատներու նախասիրութիւնները: Այսուհանդերձ, մեծամասնութեան իշխանութեան երեւոյթը ունի մէկ խնդիր. ի՞նչ կը պատահի, եթէ թիւը, քանակը կը բախի ուժին: Ի՞նչ կը պատահի, երբ օրինական ճամբով՝ կանոնների յարգումով կ'առաջանայ պատշաճ մէկ մեծամասնութիւն, որ իր իրաւասութիւնները օգտագործելով կը գոյացնէ հասարակութեան մէջ առկայ այս կամ այն փոքրամասնութեան շահերին վնասող որոշումներ:

Այս պայմաններու տակ, յաջողած ժողովրդավարութիւնները փոքրամասնութիւններու շահերը պաշտպանելու համար կը հակին օրէնքով սահմանափակել մեծամասնութեան իշխանութեան կիրարկման սահմանները: Ահա նմանօրինակ միջոցներու օրի-

նակներ. մեծամասնութեան հասողութենէն որոշ հարցեր հեռու պահելու համար սահմանափակումներու ամրագրում սահմանադրական յօդուածներու ձեւին տակ (իրաւունքներու օրինագիծ - bills of rights); համատեղ մեծամասնութիւն գոյանալու պահանջք տարբեր ընտրա-տարածքներէն ներս (կոնֆեդերացիա), երաշխիքներ, որոնք կ'ապահովեն տեղական կամ շրջանային ինքնավարութիւնը կեդրոնական իշխանութիւններու պահանջքներուն դէմ (ֆեդերալիզմ), կոալիսիոն կառավարութիւն, որ իր մէջ կը պարփակէ բոլոր կողմերը-կուսակցութիւնները, եւ կամ հասարակային ուխտի բանակցութիւններ մեծ խմբաւորումներու միջեւ, ինչպիսին են բիզնէսն ու աշխատուժ ներկայացնող միաւորումները (կորպորացիզմ):

Այսուհանդերձ, սահմանափակումները արմատական լուծումներ չեն բերեր մեծամասնութեան կողմէ չարաշահումներու կարելիութեան խնդրին. փոքրամասնութեան իրաւունքներու պաշտպանութեան ամէնէն տարածուած եւ արդիւնաւէտ ձեւը կը համարուի ընկերային-հասարակական շարժումներու եւ ամենօրեայ խնդիրներով զբաղուող շահերու շուրջ համախմբումներու առաջացումը: Այս համախմբումները կ'արտայայտեն,- ոմանք պիտի ըսէին կը մեծացնեն-, բնակչութեան մօտ առկայ այլազան նախասիրութիւններու ներուժը եւ այդ նախասիրութիւններու պատկերը կը հասցնեն ժողովրդավարօրէն ընտրուած քաղաքական գործիչներու սեղանին:

Այլ խօսքով կարելի է ըսել, որ այն բնորոշ լարուածութիւնը, որ կայ մէկ կողմէ քանակ ունեցող մեծամասնութեան եւ միւս կողմէ հասարակութեան մէջ տեղ գտած այլ ուժերուն միջեւ, արդիական ժողովրդավարութիւններէն ներս կ'առաջացնեն դժուար հակակշռելի իրավիճակներ. օպտիմալ լուծումը կարելի է ամփոփել հետեւեալ նախադասութեամբ. *ուժերը պիտի ճիշդ հաշուել, իսկ ազդեցութիւններու կշիռը առաւելագոյնս շեշտել:*

Համագործակցութիւնը միշտ ալ եղած է ժողովրդավարութեան հիմնական առանձնայատկութիւնը: Դերակատարները կամօրէն կ'ընդունին որոշումներ, որոնք պարտաւորեցուցիչ են ամբողջ հասարակութեան համար: Բոլորը պարտաւոր են համագործակցել՝ մրցակցելու համար: Բոլորը պիտի կարենան գործել հաւասական ոճով, կուսակցութիւններու, միութիւններու, շարժումներու ճամբով, որպէսզի ընտրեն թեկնածուներ, բանաձեւեն նախասիրութիւններ, իրենց ձայնը հասցնեն իշխանութեան եւ մանաւանդ յաջողին ազդեցութիւն բանեցնել քաղաքական ուղղութեան վրայ:

Սակայն ժողովրդավարութեան ընձեռած ազատութիւնները քաղաքացիներուն պիտի քաջալերեն միատեղ խորհրդակցելու, հասարակաց կարիքները ճշդորոշելու եւ իրար միջեւ տարբերութիւնները հարթելու՝ առանց կեդրոնական իշխանութեան միջամտութեան կարիք ունենալու:

Դասական ժողովրդավարութիւնը կը շեշտէ կարեւորութիւնը վերոյիշեալ որակային առանձնայատկութիւններուն, որոնք ցարդ չեն կորսուած: Ընդհակառակն, անոնք կը շարունակեն գոյատեւել մինչեւ այսօր՝ հակառակ մերօրեայ տեսաբաններու անվերջ փորձերուն՝ ժողովրդավարութիւնը հաւասարեցնելու շուկայական տնտեսութեան հետ եւ ժողովրդավարութեան ամբողջ գործընթացները նուազեցնելու սոսկ մի մրցակցութեան եւ խմբային շահերու մաքսիմալացման:

Ալեքսիս Թոքուիլ

Քաղաքացիական հասարակութիւն. Ալեքսիս Թոքուիլ (Alexis de Tocqueville) լաւագոյն կերպով կը նկարագրէ անկախ խմբաւորումներու կարեւորութիւնը ժողովրդավարութենէ մը ներս. «Ժողովրդավարութիւնը Ամերիկայի մէջ» իր աշխատութիւնը կարեւոր գրականութիւն է բոլոր անոնց համար, ովքեր ժողովրդավարութիւնը կը համարեն շատ աւելին, քան սոսկ ընտրութիւններ եւ մրցակից թեկնածուներ:

Քաղաքական արդի քննախօսութեան մէջ, համագործակցու-

թեան եւ խորհրդակցութեան երեւոյթը՝ ինքնավար խմբաւորումներու գործունէութեան ընդմէջէն, կը ներկայացուի *քաղաքացիական հասարակութիւն* «civil society» անուան տակ: Հասարակական տարբեր շահեր եւ ինքնութիւններ ներկայացնող այս միաւորները իրենց անկախութեամբ թերեւս կրնան իշխողներու սանձարձակութիւնները հակակշռել, սակայն նաեւ կարող են - եւ այստեղ է իրենց հիմնական դերակատարութիւնը - *պատրաստել աւելի գիտակից քաղաքացիներ, որոնք ոչ միայն գիտակից են իրենց նախասիրութիւններուն, ոչ միայն վճռական են իրենց գործունէութեամբ, այլ նաեւ քաղաքական գիտակցութեամբ զինուած պատրաստ են իրենց շահերը զոհել հասարակաց շահերուն, համայնական բարեկեցութեան (common good) համար:* Այս մէկի իրագործումը անհնար չէ: Ի՞նչով ուրեմն բացատրել *քաղաքացիական հասարակութիւն* երեւոյթին նկատմամբ ստեղծուած ժխտական տրամադրութիւնները մեր երկրում: Ի՞նչով բացատրել հայկական քաղաքացիական հասարակութեան ակտիվիզմին բնորոշ խնդիրները: Ներկայիս «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» հասարակական կազմակերպութեան տուեալների բազայում գրանցուած է 942 հասարակական կազմակերպություն: Հայաստանի քաղաքացիական հասարակութեան (ՔՀ) պատկերը յամենայն դէպս արտաքինէն դատելով ունի յարաբերաբար կենսունակ մակարդակ: Սակայն բացայայտ է, որ այն զուրկ է լուրջ ազդեցութիւն բանեցնելու կարողութենէն: Բացատրութիւն կարելի է փնտռել ՔՀ կազմակերպութիւններու բնոյթին մէջ:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք Հայաստանի մէջ ՔՀ կազմակերպելու փորձերը ճամբայ ելան այն վստահ ենթադրութեամբ, որ յետխորհրդային հասարակութիւնն զուրկ է ՔՀ հասկացողութենէն: Իրականութիւնը սակայն տարբեր էր. յետխորհրդային Հայաստանում տեղական համայնքները ոչ միայն իրարու հետ կը գործակցէին, այլ ունէին համագործակցութեան իրայատուկ կառոյց: Անոնք լուծումներ կը գտնէին միասնաբար տեղական զարգացման նպատակով: Համագործակցութեան ակտերը յաճախ կը սահմանափակուէին աղքատութեան եւ խորհրդային համակարգի եւ ինստիտուտներու կողմէ: Գիւղական համայնքները մեծ չափով կը վստահէին շրջանի ղեկավարներուն՝ իրենց տարածքներու զարգացումը ապահովելու համար, բայց սահմանափակ էր անհատ քաղաքացիներու ինքզինք առաջ մղելու հնարաւորութիւնը եւ որոշում կայացնելու գործընթացին անհատներու մասնակցութեան տարողութիւնը: Նոր ՀԿ-ները փոխանակ լաւ հասկնալու եւ մանաւանդ ճանաչելու քաղաքացիական մասնակցութեան առկայ ձեւերը, ամբողջութեամբ շրջանցեցին այդ կառոյցները: ՀԿ-ներու օրակարգերը երկար ժամանակ ներմուծուած էին եւ չէին համապատասխաներ համայնքներու հարցերուն եւ կարիքներուն: Մօտիկ ապագային ՀԿ-ներու իրավիճակի փոփոխութիւն չակնկալելով հանդերձ (այնքան ատեն, որ օրակարգերը կը շարունակեն մնալ դրսից թելադրուած կամ ներշնչուած) անհրաժեշտ է վերանայիլ քաղաքացիական հասարակութեան հովանիի տակ գործող կազմակերպութիւններու դերակատարութիւնը:

Հասարակական կազմակերպութիւնները կրնան վերածուիլ անհատին եւ պետութեան միջեւ կառավարման միջանկեալ հարթակի, եւ որնք կարող են խնդիրներ լուծել առանց բիրտ ուժի օգտագործման միշտ հակակշռի տակ պահելով իրենց անդամներու վերաբերմունքը: Փոխանակ որոշում կայացնողները շարունակաբար հարուածելու արդարացուած կամ ոչ արդարացուած պահանջքներով, եւ այդ ձեւով համակարգը անկառավարելի դարձնելու, հուսալի քաղաքացիական հասարակութիւնը կարող է ոչ միայն խնդիրներ լուծել, այլեւ կարող է բարելաւել եւ վերականգնել քաղաքացիութեան որակը՝ ոչ միշտ բացարձակօրէն վստահելու շուկայական տնտեսութենէն սնած անհատապաշտութեան:

Ներկայացուցիչներ (ուղղակի կամ անուղղակի ընտրուած): Արդի ժողովրդավարութեան մէջ իսկական գործի մեծ մասը իրենք է որ կը կատարեն: Մասնագիտացած քաղաքական գործիչներու այս խումբը իրենց կարիերան կը նուիրեն պետական բանալի դիրքերու հասնելու վազքին: Կասկածելի է որ որեւէ ժողովրդավարութիւն կրնայ գոյատեւել առանց այսպիսի մարդկանց: Հիմնական հարցը ուրեմն այն չէ, որ քաղաքական ընտրանին, եւ կամ մասնագիտացած քաղաքական դասը կայ թէ ոչ, կարեւորը ընտրուած ներկայացուցիչների հաշուետու լինելն է իրենց արարքներուն համար:

Ինչպէս վերը նշեցի, արդի ժողովրդավարութիւնը ունի ներկայացուցիչ ընտրելու տարբեր կանալներ: Ընտրականը, հիմնուած տարածքային ընտրազանգուած-

ներու վրայ, ամէնէն երեւելին՝ բացայայտն է, այն կ'աւարտի խորհրդարանի կամ նախագահի մը ընտրութեամբ, եւ համապատասխանաբար հաշուետու է ամբողջ քաղաքացիութեան առաջ: Բայց այսօր կառավարման ապարատը հսկայօրէն աճած է եւ նոյն այդ քաղաքացիութեան պահանջով բազմապատկուած է հանրային որոշումներ կայացնող այն գործակալութիւններուն քանակը, որոնք ընտրովի չեն: Այս գործակալութիւններուն շուրջ զարգացած է հսկայական ապարատ, յագեցուած մասնագիտացած ներկայացուցիչներով, ներկայացուցիչներ, որոնք ունին ֆունկցիոնալ շահեր, եւ ոչ թէ տարածքային ընտրազանգուածներ: Դժբախտաբար հասարակային կազմակերպութիւններու անուան տակ պահուած, սակայն խորհին մէջ միայն շահ ներկայացնող այս կազմակերպութիւնները,- եւ ոչ թէ քաղաքական կուսակցութիւնները,- այսօր դարձած են քաղաքացիական հասարակութեան հիմնական ներկայացուցիչները, շատ հիշ պարագաներու երբեմն տեղ կը գրաւեն նաեւ ընկերային շարժումները:

Նոր եւ դիւրաբեկ ժողովրդավարութիւնները, որոնց կարգին Հայաստանի Հանրապետութիւնը, կարիին «սեղմ- ուած ժամանակի» մէջ: Այս ժողովրդավարութիւնները երբէք պիտի չնմանին 19րդ դարի եւ 20րդ դարասկիզբի եւրոպական ժողովրդավարութիւններուն: Մենք պիտի չակնկալենք, որ կարճ ժամանակի մէջ պիտի տիրանանք ժողովրդավարութեան բազմաստարբեր կանոններուն այնպէս, ինչպէս Եւրոպան ըրաւ՝ հանգրուաններով, աստիճանաբար:

Կուսակցութիւններու, շահերու, շարժումներու շփոթալի մի խառնիճաղանճ, որոնք թէ միաժամանակ եւ թէ միահանգրուանօրէն կը փորձեն քաղաքական ազդեցութեան հասնիլ, ստեղծելով այնպիսի մարտահրաւէրներ, որոնք անցեալի ժողովրդավարականացումի գործընթացին գոյութիւն չեն ունեցած:

Ժողովրդավարութիւնը հնարաւոր դարձնող գործընթացներ

Ժողովրդավարութեան բաղադրիչներն իրենց վերացական բնոյթի բերումով ծնունդ կուտան շարք մը հաստատութիւններու եւ ժողովրդավարութեան ենթատիպերու: Այսուհանդերձ, որպէսզի ժողովրդավարութիւնը ծաղկի, հասարակութիւնը պիտի հետեւի գործընթացային առանձնայատուկ կանոններու եւ ապահովէ քաղաքացիական իրաւունքներ: Որեւէ պետութիւն որ կը ձախողի վերոյիշեալ սահմանափակումները պարտադրել ինքզինքին, որ կը ձախողի օրէնքի գերիշխանութիւնն պարտադրել իր իսկ գործընթացներուն վրայ, չի կրնար ժողովրդավար համարուիլ: Այս գործընթացներն առանձնաբար վերցուած չեն կրնար ժողովրդավարութիւնը սահմանել-բնորոշել: Բայց անոնց առկայութիւնը անհրաժեշտ է ժողովրդավարութեան յարատեւման համար: Այլ խօսքով, անոնք անհրաժեշտ բայց ոչ բաւարար պայմաններ են ժողովրդավարութեան գոյացման համար:

Ռոբերտ Դահլի (Robert Dahl) հիմնական ներդրումը այս քննարկման մէջ եղաւ *գործընթացային նրաւազգոյն ցանկը:* Սնորեւ հակիրճ ցանկը այն պայմաններուն, որոնք

Ռոբերտ Դահլ

անփոխարինելի են քաղաքական արդի ժողովրդավարութիւն մը ունենալու համար.

1) կառավարութեան քաղաքականութեան առընչուող որոշումներուն վրայ հակակշիռ ունենալու իրաւունքը սահմանադրականօրէն կը տրուի, կը վստահուի ընտրուած պետական ծառայողներուն.

2) պետական ծառայողներու ընտրութիւնները տեղի կ'ունենան յաճախակի եւ արդար ընտրութիւններով, ուր հարկադրումն ու բռնադատումը յարաբերաբար հազուադէպ են.

3) բոլոր մեծահասակներն իրաւունք ունին քուէարկելու.

4) բոլոր մեծահասակներն իրաւունք ունին պաշտօնական դիրքի մը համար պայքարելու եւ ընտրուելու.

5) քաղաքացիները կը պայքարին քաղաքական բազմատեսակ հարցերու շուրջ ազատ արտայայտութեան համար, առանց ենթակայ ըլլալու պատիժի ենթարկուելու վտանգին.

6) քաղաքացիները կը պայքարին այլընտրանքային աղբիւրներէ տեղեկատուութիւն ստանալու իրաւունքին համար, իսկ այլընտրանքային տեղեկատուութեան գոյութիւնը կը պաշտպանուի օրէնքով.

7) քաղաքացիները նաեւ կը պայքարին անկախ համախմբումներու, կազմակերպութիւններու, ներառեալ քաղաքական կուսակցութիւններ եւ շահի խմբաւորումներ կազմելու համար:

Վերոնշեալ եօթը կէտերը որոշ տեսաբաններու համար ըստ էութեան կը լրացնեն ժողովրդավարութեան գործընթացային պայմանները: Սակայն հայասանեան կացութենէն մեկնելով կ'առաջարկեմ յաւելեալ երկու կէտեր, որոնցմէ առաջինը կրնայ պահ մը թուիլ առաջին կէտի շեշտուած բիւրեղացում, իսկ երկրորդը պարզապէս ենթադրելի նախապայման մնացեալ բոլոր եօթը պայմաններուն:

Ուրեմն կ'աւելցնեմ հետեւեալը.

Ա. Ժողովուրդի կողմէ ընտրուած քաղաքական գործիչը պիտի կարենայ կիրառել սահմանադրական իր իրաւունքները առանց ենթակայ ըլլալու ոչ ընտրուած գործիչներու կողմէ զինք ոնցաստակ ընող (նոյնիսկ եթէ այն բացայայտ չի արտում) ընդդիմութեան:

Ժողովրդավարութիւնը խաթարուած է, եթէ զինեալ ուժերու բնագաւառի պետական գործիչները, իրենք զիրենք խրամատի մէջ պահող քաղաքացիական ծառայողները, եւ կամ պետական այլ մեքենաներներ պահեն ընտրուած գործիչներէն անկախ գործելու եւ կամ ժողովուրդի ներկայացուցիչներու որոշումները վետոյի ենթարկելու կարողութիւնը:

Առանց այս յաւելեալ երկու պայմաններուն շատ մը պետութիւններ կրնան ժողովրդավարութիւն որակուիլ, երբ բացարձակօրէն այդպիսին չեն: Այս յաւելումով կարելի է հակակշռել միայն ընտրութիւններու կայացման չափանիշով բաւարարուելու եւ քաղաքական այլ իրականութիւններ անտեսելու միտումները:

Բ. Պետութիւնը պիտի ըլլայ ինքնակառավարող. այսինքն պիտի կարենայ գործել անկախ բոլոր այն կաշկանդումներէն, որոնք կը պարտադրուին երկրի վրայ ձգուող քաղաքական մի այլ սիստեմի կողմէ: Դահլը եւ ժողովրդավարութեան ուրիշ տեսաբաններ այս պայմանը կ'անտեսեն, որովհետեւ հաւանաբար նկատի ունին ինքնիշխան ազգային պետութիւններ:

Սակայն, ալիանսներու, բլոկներու ազդեցութեան ոլորտներու եւ այլ կարգադրութիւններու բերումով, ինքնիշխանութեան հարցը մեր պարագային ակնյայտ է եւ ցցուն:

Արդեօ՞ք համակարգ մը ժողովրդավարական է, եթէ իր ժողովուրդի կողմէ ընտրուած ներկայացուցիչները չեն կրնար պարտաւորեցուցիչ որոշումներ ընդունիլ՝ առանց արտաքին, դրսի գործօններու համաձայնութեան:

Այս շատ կարեւոր հարցադրում է նոյնիսկ այն պարագային, երբ այսպէս կոչուած «դրսեցիները» իրենք ժողովրդավարական են, իսկ «ներսինները» յարաբերաբար ազատ են՝ փոխելու կամ նոյնիսկ վերջ դնելու երկրում գործող միաձայնութեամբ որդեգրուած մէկ կարգադրութեան: Սակայն հարցադրումը մահու եւ կենաց խնդիր կը դառնայ, մանաւանդ եթէ ոչ դրսեցիին իսկական հոգը ժողովրդավարութեան կայացումն է եւ ոչ ալ ներսիններն են յարաբերաբար անկաշկանդ:



(Շարունակելի)

Հայոց կոտորածների կապակցությամբ 1919-1920 թթ. Թուրքիայում հարուցված դատական գործերը.

երեք մահապատիժ

Մելինէ Անումյան

Թեև ժամանակակից Թուրքիան շարունակում է ժխտել Մեծ եղեռնի փաստը, այնուամենայնիվ, անհերքելի իրողություն է, որ Հայոց ցեղասպանությունն առաջինը դատապարտած երկիրը հանդիսանում է հենց ինքը՝ Օսմանյան կայսրությունը: Խոսքը վերաբերում է 1919-1920 թթ. Ստամբուլի ռազմական արտակարգ ատյաններում տեղի ունեցած 29 տարբեր դատական գործերին, որոնք բոլորն էլ հարուցվել էին հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով:

Դատավարությունների արդյունքում կայացվել է ընդհանուր թվով 16 մահապատժի դատավճիռ, որից 13-ը՝ առանց ամբաստանյալների ներկայության (դատապարտյալները գտնվում էին փախուստի մեջ):

Այսպես օրինակ, հեռակա կարգով մահապատժի դատապարտվեցին Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, դոկտոր Նազիմը, դոկտոր Բեհաէդդին Շաքիրը, Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմին և ուրիշներ:

Իսկ դատավարությանը ներկա գտնվող և մահապատժի ենթարկված դատապարտյալները հետևյալ անձինք էին.

- Բողազլըյանի գավառապետ, Յոզղատի գավառապետի տեղակալ Մեհմեդ Քեմալը (Յոզղատի դատավարություն),
- Երզնկայի ժանդարմերիայի հրամանատար, Հայրան Բաբա մականունը կրող Հաֆիզ Աբդուլլահ Ավնին (Երզնկայի դատավարություն),
- Բաբերդի կառավարիչ, հետագայում՝ Ուրֆայի գավառապետ Բեհրամզադե Նուսրեթը (Բաբերդի դատավարություն):

Հայոց տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված առաջին դատական գործը վերաբերում էր Յոզղատ գավառին: Դատավճիռը կայացվեց 1919 թվականի ապրիլի 8-ին, համաձայն որի ամբաստանյալներից Քեմալը դատապարտվեց մահվան, իսկ ժանդարմերիայի պետ Թեվֆիկը՝ տասնըհինգ տարվա տաժանակիր աքսորի:



Մեհմեդ Քեմալ

Սուլթան Մեհմեդ 6-րդ Վահդեդդին

Դատավճռում բերված մեղադրական ապացույցները վկայում էին Քեմալի դաժանության և հայերին իսպառ բնաջնջելու մտադրության մասին:

Այսպես օրինակ՝ նշվում էր, թե հայությանը կոտորելու նպատակով Քեմալը ոտքի էր հանել ոչ միայն իր տրամադրության տակ գտնվող սանջակի հայերին, այլև բոլոր մահմեդականներին էր դիմել հայ ժողովրդին իսպառ ոչնչացնելու կոչով:

Պետք է նշել, որ Մեհմեդ Քեմալը հայտնի էր հայերի նկատմամբ իր առանձնահատուկ ատելությամբ: Յոզղատի դատավարության ընթացքում կատարված բացահայտումների համաձայն՝ հայոց վայրագ կոտորածների թատերաբեմերից մեկը դարձած Քելլեր գյուղ այցելությունից հետո Քեմալը հայտնել էր իր կնոջը, թե թատրոն էր գնացել և «վայելել» այդ սարսափազդու տեսարանները:

Բողազլըյանի գավառապետը կոտորել էր մոտ 35.000 հայի:

- Քեմալը մահվան դատապարտվեց կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ և 171-րդ հոդվածների հիման վրա: Դատավճիռն անմիջապես վավերացվեց սուլթան Մեհմեդ 6-րդ Վահդեդդինի կողմից: Դատապարտյալը կախաղան բարձրացվեց 1919 թ.ապրիլի 10-ին Ստամբուլի Բայազետ հրապարակում:

Մահապատժի արարողությունն իրականացվեց տարօրինակ կերպով: Օրենքի համաձայն՝ կախաղանի դատապարտվածը մահապատժի էր ենթարկվում նախքան արևածագը, դատապարտյալի մարմինը հրապարակում էր մնում ևս 5-6 ժամ, որից հետո՝ անշուք կերպով թաղվում: Մինչդեռ Քեմալի մահապատիժն ի կատար ածվեց կեսօրից հետո, ժամը 17:00-ին: Արարողությանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ և հոծ բազմություն: Մահապատժից հետո Քեմալի դիակը դրվեց Բայազետի մզկիթի լվացարանում. անթույլատրելի գործողություն՝ մահապատժի դեպքում:

Մահապատժի հաջորդ օրը՝ ապրիլի 11-ին, մեծ շուքով կազմակերպվեց Քեմալի թաղումը, որին մասնակցում էր առավել քան 10.000 ցուցարար: Ոճրագործը հռչակվեց «ազգային նահատակ», նրա այրին և զավակները վերցվեցին ազգային խնամակալության տակ: Եվ, ինչպես նշում է Արամ Անտոնյանը. «Այն թուրք ժողովուրդը, որ հանրային հանգանակութեանց իր քսակը այն ատեն միայն կը բանայ, երբ վիզը կը սեղմեն, ինքնաբերաբար, 5-10 օրուան ընթացքին 20.000 օսմ. ոսկի գումար մը հանգանակելով, յանձնեց Քէմալ պէյի այրիին»: Վերոնշյալ իրադարձությունները վկայեցին, որ երիտթուրքերը դեռ շարունակում էին որոշակի ուժ ներկայացնել:

Երզնկայի դատական գործը հարուցվել էր «տեղահանության ընթացքում հայերի սպանությունների և բնաջնջման» (katl ve imha), ինչպես նաև՝ նրանց ունեցվածքի կողոպտման (mallarini yagma) մեղադրանքներով:

Ի դեպ, Երզնկայի դատավճիռը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Շեշտենք, որ ի տարբերություն մյուս դատավարությունների՝ Երզնկայի դատավճռում օգտագործվում էր ոչ թե taktil (կոտորած), այլ՝ imha (բնաջնջում) բառը, այսինքն՝ տեղահանության ընթացքում կատարված սպանությունների հետ մեկտեղ ընդգծվում էր նաև հայերի բնաջնջման փաստը:

Դատավճռի պատճենը 1920 թվականի հուլիսի 27-ին հրապարակվել է թուրքական Takvim-i Vekayi (Իրադարձությունների օրացույց) պետական պաշտոնաթերթի կողմից:

Դատավճռից տեղեկանում ենք, որ Երզնկայի տեղահանության և կոտորածների դատական գործով սկզբում դատական հետապնդման են ենթարկվել Երզնկայի նախկին գավառապետ Մեմդուհը, ժանդարմերիայի հրամանատար, նաև հյուրանոցատեր Հաֆըզ Աբդուլլահ Ավնին, Երզնկայի նախկին պատգամավոր Հալեթը, Հաջի Վահիդզադե Ռըզան, Դերսիմի ցեղապետերից Քըրմո Յուսուֆը, ժանդարմերիայի ենթասպա Արսլանը և Դանզիկ նահիեի կառավարիչ, ցեղապետ Քեքոն:

Սակայն, ինչպես նշվում է դատավճռում, Հաջի Վահիդզադե Ռըզան դատաքննության ընթացքում վախճանվել էր, ինչի արդյունքում նրա դեմ հարուցված դատական գործը կարճվել էր, իսկ Երզնկայի գավառապետ Մեմդուհն աքսորվել էր Մալթա, և նրա գործը առանձնացվել էր հետագայում քննվելու նպատակով:

Դատավճռում նաև ընդգծվում էր Երզնկայի ռազմական գործարանի նախկին տնօրեն Ահմեդ Ռեֆիկի, տեղի զինվորական միջնակարգ դպրոցի նախկին տնօրեն Հաֆըզ Սուլեյմանի, ժանդարմերիայի հրամանատար Իսմայիլ Հաքքըի, ժանդարմերիայի լեյտենանտ Ջեմիլի, սպա Սուլեյմանի, ենթասպա Հալիդի, ավագանու ներկայացուցիչ Յաշարի, ժանդարմ Դելի Մեհմեդի, տեղի զինվորական միջնակարգ դպրոցի տնօրենի տեղակալ Ասըմի և լեյտենանտ Ջեզայիրլի Մեհմեդի դեմ դատական հետապնդում սկսելու անհրաժեշտության մասին: Սակայն վերոնշյալ որոշումը մնաց թղթի վրա:

Երզնկայի դատավճռով, կայսերական քրեական օրենսգրքի 170-րդ և զինվորական քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածներով՝ հեռակա կարգով մահապատժի դատապարտվեցին Երզնկայի պատգամավոր Սաղըրզադե Հալեթը, որն, ի դեպ, ինչպես նշում է Արամ Անտոնյանը, հարյուրավոր հայ մանուկների դահիճն էր եղել, ավազակապետ Քըրմո Յուսուֆը և Երզնկայի ոստիկանության ենթասպա Արսլանը:

Երզնկայի ոստիկանության հրամանատար Հաֆըզ Աբդուլլահ Ավնիի ներկայությամբ անցկացված դատաքննության արդյունքում վերջինիս նկատմամբ մահվան դատավճիռ կայացվեց, որն ի կատար ածվեց 1920 թ. հուլիսի 22-ին:

Երզնկայի դատավճռին և Հաֆըզ Աբդուլլահ Ավնիի մահապատժի արարողությանն անդրադարձել է նաև Peyam-i Sabah (Վաղորդյան լուր) օրաթերթը 1920 թվականի հուլիսի 30-ի համարում:

Պետք է նշել, որ ռազմական արտակարգ ատյանները գրեթե գաղտնի էին պահում հայոց կոտորածներին վերաբերող դատավճիռները, և եթե թուրքական օրաթերթերին հաջողվում էլ էր դատավճիռներից որոշ քաղվածքներ կատարել, ապա կառավարական գրաքննությունը արգելում էր դրանց հրապարակումը:

Սակայն Peyam-i Sabah-ը ոչ միայն մանրամասն նկարագրել էր մահապատժի արարողությունը, այլև՝ դատավճիռը տպագրել ամբողջությամբ:

Հոդվածը վերնագրված էր հետևյալ կերպ. «Մարդասպանի մահապատիժը: Կախաղանի դատապարտված Հաֆըզ Աբդուլլահ Ավնի: Տեսնենք, թե ինչեր էր երազել վերոնշյալը. կուսակցությանը շարունակ հավատարիմ մնալու խենթությունը»: Թերթն ընդգծում էր Հաֆըզ Աբդուլլահ Ավնիի՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության՝ Էդիրնեի լիազոր ներկայացուցչի եղբայրը լինելու հանգամանքը:

Հոդվածում հաղորդվում էր հետևյալը. «Համաշխարհային պատերազմի ժամանակ Երզնկայում կատարված տեղահանության ընթացքում տեղի հայե-



Երզնկա

Բեհրամզադե Նուսրեթ

րի սպանությունների և բնաջնջման, ինչպես և՝ ունեցվածքների կողոպտման մեղադրանքներով ձերբակալված և 18 ամիս շարունակ զինվորական բանտի կալանավոր եղած Հաֆըզ Աբդուլլահ Ավնին դատապարտվեց մահվան: Դատավճիռը վավերացվեց սուլթանի կողմից»:

Այնուհետև հոդվածում մանրամասնորեն նկարագրվում էր մահապատժի արարողությունը, նշվում, որ մահապատժին ներկա էին Առաջին ռազմական արտակարգ ատյանի անդամ Ֆահիքը, ոստիկանապետի տեղակալ Օսման Ռեֆիքը, դատախազի տեղակալ Իբրահիմը և ուրիշներ:

1920 թ. հուլիսի 20-ին մահվան դատավճիռ կայացվեց նաև Բաբերդի կառավարիչ Բեհրամզադե Նուսրեթի նկատմամբ, որը նույնպես ներկա էր դատավարությանը:

Բաբերդի դատավճիռը չի արձանագրվել Takvim-i Vekayi օրաթերթի կողմից. պաշտոնաթերթում հրապարակվել է միայն սուլթանի կողմից դատավճռի վավերացումը, իսկ դատավճիռն ամբողջությամբ տպագրվել է Tercuman-i Hakikat (Ճշմարտության մեկնաբան) օրաթերթի՝ 1920 թվականի օգոստոսի 5-ի համարում, որը թարգմանել և հրապարակել է Հայկազն Գ. Ղազարյանը:

Նույն դատավճռով հեռակա կարգով մահապատժի դատապարտվեց նաև լեյտենանտ Մեհմեդ Նեջաթին:

Բաբերդի դատավճռում ընդգծվում էր այն փաստը, որ կոտորածի հրամանը տրվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից ու շրջաններ ուղարկվել հատուկ սուրհանդակների միջոցով. «...բազմազան վայրերու մէջ տեղի ունեցած ողբերգական ջարդերու շուրջ մինչեւ հիմա Պատերազմական ատեանին կողմէ կատարուած դատավարութեանց եզրակացութիւնը եղած է այն, թէ յիշեալ ոճիրները նախ եւ առաջ Իթթիհատ վէ Թերագգը ճեմիյէթին Ընդհանուր Կեդրոնին մէջ կանխամտածուած եւ որոշուած են»:

Բաբերդի դատավճռում նշվում էր նաև, որ մեղադրյալը կազմակերպել էր 20.000 հայերի կոտորածը, ինչի շնորհիվ պաշտոնի բարձրացում էր ստացել: Դատապարտյալը մահապատժի ենթարկվեց 1920 թ. օգոստոսի 5-ին Ստամբուլի Բայազետի հրապարակում:

Շեշտենք, որ մահապատժի այս 3 դատավճիռներն էլ կայացվեցին մեծ վեզիր Դամադ Ֆերիդի օրոք, որը համեմատաբար առավել վճռական էր տրամադրված, այսպես կոչված, «պատերազմական հանցագործներին» բացահայտելու և դատապարտելու խնդրում:

Ինչպես նշում է Թաներ Աքչամը, արդեն հիմնականում քեմալականներով ներկայացված վերջին Օսմանյան խորհրդարանի պատգամավորները 1920 թ. փետրվարի 20-ին հանդես եկան Դամադ Ֆերիդ փաշայի դեմ դատական գործ հարուցելու առաջարկով, քանի որ վերջինս բավականին հետևողական էր հայոց կոտորածների պատասխանատուներին բացահայտելու մեջ:

Քեմալականների ճնշումների արդյունքում Դամադ Ֆերիդը 1920 թվականի հոկտեմբերի 17-ին հարկադրված եղավ հրաժարական տալ: Նրան փոխարինեց քեմալականների հանդեպ բարյացակամ տրամադրված Թեվֆիկ փաշան: Վերջինիս պաշտոնավարման ընթացքում՝ 1920 թվականի նոյեմբերի 8-ին, ձերբակալվեցին Բաբերդի դատավճիռն արձակած դատավորները:

Պետք է նշել, որ մինչ այդ էլ Ռազմական արտակարգ ատյանի դատավորները, դատախազները և դատարանում որպես վկա հանդես եկած անձինք ահա-

բեկումների էին ենթարկվում երիտթուրքերի կողմից, որոնց մեծ մասը դեռ շարունակում էր պաշտոններ զբաղեցնել ռազմական, ներքին և արդարադատության նախարարություններում: Սակայն, դատավորների ձերբակալման դեպքն աննախադեպ էր: Նրանց դեմ քրեական գործ հարուցվեց՝ Բեհրամզադե Նուսրեթին մահվան դատապարտելու կապակցությամբ: 1921 թվականի հունվարի 5-ին դատավոր Նեմրութ Մուստաֆա փաշան և Բաբերդի դատավճիռն ստորագրած մյուս դատավորները դատապարտվեցին 3 ամիս ազատազրկման: Ըստ Գրիկերի (Գրիգոր Կերկերյան), դատավոր Մուստաֆա փաշան դատապարտվեց ռազմածովային նախարար Ավնի փաշային խստորեն հարցաքննելու համարձակություն ունենալու պատճառով:

Իսկ հայերի բնաջնջման համար մահապատժի ենթարկված այս երեք ոճրագործներից երկուսը՝ Մեհմեդ Քեմալը և Բեհրամզադե Նուսրեթը, հերոսացվեցին քեմալականների կողմից: Ասպես, Բեհրամզադե Նուսրեթի մահապատժի օրը՝ 1920 թ. օգոստոսի 5-ին, Անկարայի մեջլիսը, ի նշան հարգանքի, 10 րոպեով դադարեցրեց իր աշխատանքը: Կրկին Անկարայի մեջլիսի կողմից 1920 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված որոշման համաձայն՝ թոշակ տրամադրվեց Քեմալի ընտանիքին, նույն թվականի դեկտեմբերի 25-ին որոշում կայացվեց Բեհրամզադե Նուսրեթի ընտանիքին թոշակ նշանակելու մասին:

Այսօր ևս Բողազլըյանում կարելի է տեսնել հերոսի կոչմանն արժանացած հայասպան Քեմալի արձանը, ինչ վերաբերում է մյուս ոճրագործին՝ Բեհրամզադե Նուսրեթին, ապա Ուրֆայում նրա անվամբ են կոչվել տարրական դպրոց ու պողոտա:

Այսպիսով, մեկ ու կես միլիոն հայության ոչնչացման համար մահապատժի ենթարկվեց ընդամենը 3 հոգի:

Ակնհայտ է, որ թուրքական ռազմական արտակարգ ատյանների դատավորները մահվան դատավճիռ արձակելիս առավել «շռայլ» էին փախուստի մեջ գտնվող մեղադրյալների հանդեպ:

Ինչպես սկզբում նշեցինք, Յոզղատի դատավարությունն առաջինն էր հայերի տեղահանության ու կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի շարքում, և Մեհմեդ Քեմալի մահապատժի նպատակը միջազգային հասարակական կարծիքի առջև արդարադատ երևալու ցանկությունն էր: Իսկ Հաֆըզ Աբդուլլահ Ավնիի և Բեհրամզադե Նուսրեթի դատավճիռներն արձակվեցին Սևրի դաշնագրի կնքման նախօրեին և հաղթանակած տերությունների դիրքորոշումը մեղմելու նպատակ էին հետապնդում:

Օգտագործված գրականություն

[1] Taner Akcam, Ermeni tabusu aralanirken diyalogtan baska cuzum var mi, Istanbul, 2000, s. 93.

[2] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա.Հ. Փափազյանի), Երևան, 1989, էջ 165:

[3] Геноцид-преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995 г.), Отв. ред. академик НАН Республики Армения В. А. Микаелян, Ваагн Дадрян, Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, Москва, 1997, с. 27.

[4] Taner Akcam, Insan Haklari ve Ermeni Sorunu, imge kitabevi yayinlari, 2002, s. 472.

[5] Գրիկէր, Եոզղատի հայասպանութեան վավերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 330:

Ռոստոմի գաղափարական մեծութիւնը

Կարէն Խանլարեան

2009թ. յունուարին լրացաւ Հ.Յ.Դ. հիմնադիրներից մէկի՝ Ռոստոմի (Ստեփան Զորեան) մահուան 90-րդ տարելիցը: Ցաւօք, Հայաստանում քչերն են իրազեկ այդ մեծ հայի՝ Ռոստոմի կեանքի եւ գործունէութեան մանրամասնութիւններին: Ցաւօք, որովհետեւ Ռոստոմի նման մարդիկ անհատականութիւններ են, որոնք, իրենց վճռորոշ, ճակատագրական եւ անփոխարինելի դերակատարութեամբ, իւրաքանչիւր ազգի պատմութեան մէջ ծնւում են մի քանի հարիւր տարին մէկ անգամ:

Ռոստոմը մեզ ներկայանում է բազմակողմանի եւ հարուստ կենսագրութեամբ: Նա, երեսուն տարի շարունակ, Կովկասից, Ռուսաստանից մինչեւ Պոլիս, Երկիր, Էրզրում, Թեհրան, Թաւրիզ եւ մինչեւ Ժնեւ, Ռումինիա, կազմակերպել ու ղեկավարել է հայ ազգային-ազատագրական պայքարը: Վերջին տարիներին, այս պատմական իրողութիւններին առնչւող որոշ աշխատութիւններ են հրապարակուել Հայաստանում: Դրանց մէջ, համեմատաբար, համեստ անդրադարձներ կան նրա գաղափարախօսական, տեսաբանական կարողութեանը եւ թողած հարուստ աւանդին:

Կուսակցութեան մէջ, ըստ Սիմոն Վրացեանի, Ռոստոմին մարքսիստ էին կոչում: Նրա կենսագրութեան ուսումնասիրութիւնը մեզ յանգեցնում է մի պարզ եզրակացութեան, այն է՝ Ռոստոմը, իր անսահման ընթերցասիրութեան շնորհիւ, 19-րդ դարի վերջի եւ յատկապէս 20-րդ դարասկզբի այն հազուագիւտ մտաւորականներից էր, ով հանգամանօրէն ծանօթ էր մարքս-էնգելսեան դասական գրականութեանը: Բայց նա նոյն յաջողութեամբ տիրապետում էր նաեւ ռուսական ընկերվարութեան՝ նարոդնիկութեան եւ էսէռական գաղափարախօսական սկզբունքներին: Նա, տեսաբանի բծախնդրութեամբ եւ հետազօտական մանրակրկիտ դիտարկումներով, խորամուխ էր եղել նաեւ Միխայէլովսկու, Չերնովի, Լաւրովի աշխարհահայեացքներին: Քայլող հանրագիտարանի (էնցիկլոպեդիայի) նման կարգավիճակով նա ակտիւ դեր էր ստանձնել Հ.Յ.Դ. անդրանիկ ծրագրի մշակման գործում եւ ապացուցել իր բացառիկ կարողականութիւնը այդ բնագաւառում:

Հ.Յ.Դ. 1907 թ. Ծրագրի ներածական բաժնի, աշխարհահայեացքի բանաձեւման բուն հեղինակն ամբողջապէս ինքն է եղել: Հ.Յ.Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովի (1907 թ.) նիստերի արձանագրութիւններից պարզւում է, որ Ռոստոմի գրչով են բանաձեւուել մի շարք հիմնարար դրոյթներ, որոնք, սակայն, կտրուկ հակասութեան մէջ են դասական մարք-



Երուանդ Ֆրանգեան

Միքայէլ Վարանդեան

Գարեգին Խաժակ

սիզմի փիլիսոփայութեան՝ տրամախոհական նիւթապաշտութեան (դիալեկտիկական մատերիալիզմ) հիմունքների հետ: Այսպէս, Ռոստոմը, փաստօրէն, պատմութեան առարկայական եւ ենթակայական գործօնների նշանակութիւնը գնահատել է համադրական միարմատութեան (սինթետիկական մոնիզմ) մեթոդիկայով, ուրուագծելով դրանց միջեւ առկայ ներդաշնակ եւ ներգործող փոխկապակցուածութիւնը: Մինչդեռ զուտ մատերիալիստական դիտանկիւնից ենթակայական գործօնները մշտապէս ֆունկցիոնալ կախուածութեան մէջ են առարկայական ազդակներից: Ազգայնութեան գաղափարի տեսական ձեւակերպումը նոյնպէս տուել է Ռոստոմը, որն էլ, հիմնովին, հակոտնեայ է դասական մարքսիզմի՝ «բանուորները հայրենիք չունեն» յայտնի ֆրազին: Այնուամենայնիւ, Ռոստոմը Հ.Յ.Դ. 1907 թ. Ծրագրի աշխարհահայեացքի բաժնում մտցրել է կապիտալի կենտրոնացման մարքսիստական դրոյթը եւ պատմական մատերիալիզմի հասարակարգային, ֆորմացիոնալ տեսութիւնը:

Նշուած օրինակներից կարելի է եզրակացնել, որ Ռոստոմը ձգտում էր օրուայ քաղաքական գաղափարախօսութիւնների ու փիլիսոփայական դպրոցների ոլորտից Հ.Յ.Դ. աշխարահայեացք ներմուծել օգտակար տարրեր՝ առանց այդ դպրոցների ամբողջական որդեգրման պարտաւորուածութեան եւ առանց Հ.Յ.Դ. գաղափարախօսութեան ճակատին որոշակի վարդապետութեան խարանը դաջելու: Այս նոյն մօտեցումն ունէին նաեւ Քրիստափորն ու Սիմոն Զաւարեանը՝ Նարոդնայա Վոլիայից ու բակունինեան անարխիզմից ընկալած իրենց տեսական պաշարներով: Այս երեք մեծերի գաղափարախօսական նշուած վարքագծին հետեւել են նաեւ դաշնակցական միւս տեսաբանները՝ Միքայէլ Վարանդեանը, Եղիշէ Թոփչեանը, Գարեգին Խաժակը, Երուանդ Ֆրանգեանը, աւելի ուշ՝ Գառնիկ Գիւզալեանը, Հրայր Մարուխեանը, Հրաչ Տասնապետեանը, Հրայր Խալաթեանը եւ ուրիշներ:

Միքայէլ Վարանդեանը, օրինակ, «համակարգային տեսութեան» նախահայրերի արծարծած մեթոդներից փորձել է կիրառել որոշակի սկզբունքներ՝ ազգային գիտակցութեան, հայրենիքի գաղափարի բնորոշման իր բանաձեւերում: Ի դէպ, Վարանդեանի նշուած բանաձեւերը լայն կարելիութիւն եւ բաւականին շարժունակ միջոցներ են տրամադրում մեզ, մանաւանդ նորօրեայ պայմաններում յայտնաբերելու ազգային պատկանելութեան ճշմարիտ իմաստը:

Գարեգին Խաժակը, ազգութեան մասին իր ուսումնասիրութեան մէջ, հիմք ընդունելով պատմական մատերիալիզմի ֆորմացիոնալ տեսութիւնը, այդուհանդերձ խիստ քննադատութեան է ենթարկել մի կողմից՝ «Կոմունիստական մանիֆեստ»-ի աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտ) ֆրազները եւ միւս կողմից՝ երիտասարդ Մարքսի թթու ազգայնամոլական (շովինիստական) դիտանկիւնները փոքր ազգերի ուծացման (ասիմիլիզացիայի) վերաբերեալ: Երիտասարդ Մարքսի այս մօտեցումները, որոնք բոլորովին էլ ներկայացուած չեն եղել սովետական իրականութեան մէջ, գումարելով մարքսիզմի՝ ազգերի ասիմիլիզացիայի տեսութեանը, Գարեգին Խաժակը բացայայտել է կեղծ միջազգայնականութեան (ինտերնացիոնալիզմ), աշխարհա-



Հրայր Խալաթեան

Հրայր Մարուխեան

Հրաչ Տասնապետեան

քաղաքացիութեան (կոսմոպոլիտիզմ) եւ բացառիկութեան հիման վրայ ձեւաւորուած ազգայնականութեան (նացիոնալիզմ) եւ ազգայնամոլութեան (շովինիզմ) խորքային առնչութիւնները եւ էական ընդհանրութիւնները:

Ռոստոմի այդ ստեղծարար մօտեցման հետքերով է քայլել նաեւ Երուանդ Ֆրանգեանը, որը փորձել է Մախի եւ Աւենարիւսի փիլիսոփայական սկզբունքներով առաւել հարստացնել Հ.Յ.Դ. աշխարհահայեացքը: Հրաչ Տասնապետեանն էլ, նոյն մօտեցմամբ, յեղափոխութիւն հասկացութեան վերաբերեալ արդիական մօտեցումներ է փոխառել ջոնսոնեան տեսութիւնից: Իսկ Հրայր Մարուխեանն ու Հրայր Խալաթեանը շուեդական սոցիալ-դեմոկրատիայի փորձից արծարծել եւ լայն վերլուծութեան են ենթարկել խառը տնտեսութեան մասին նորօրեայ մօտեցումները, որոնք իրենց որոշակի ազդեցութիւնն են ունեցել Հ.Յ.Դ. 1978 թ. Ծրագրի աշխարհահայեացքի ձեւաւորման գործում:

Տարակուսում ենք այն հարցում, թէ որքանով է արդար Ռոստոմին մարքսիստ անուանելը, քանզի Ռոստոմը անտարակոյս հեռու է եղել դոգմատիկ մտածողութիւնից, ֆանատիկոսութիւնից: Մեզ յայտնի է նաեւ այն փաստը, ըստ որի Ռոստոմը Հ.Յ.Դ. 1917 թ. Ռայոնական ժողովում, հիմնուելով Սիմոն Զաւարեանի մտքերին, յոյս է յայտնել, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը, մի օր, հայ աշխատաւոր դասակարգի պաշտպանութեան դիրքից կը բարձրանայ բովանդակ հայ ազգի շահերի պաշտպանութեան դիրքերը: Ռոստոմի կողմից առաջ քաշուած այս գաղափարը, որը հետագայում որդեգրուեց Հ.Յ.Դ. 1978 թ. եւ 1996 թ. ծրագրերում, հիմնականօրէն եւ ակնյայտ կերպով հակադրւում է մարքսիզմի դասակարգային թէորիային: Թէորիա, որի կողքից անգամ փոքր հեռաւորութեամբ անցած բազմաթիւ քաղաքական, մտաւորական գործիչներին մարքսիստներն անխնայ անուանել են «ռեվիզիոնիստ», «կաուցկիստ», դաւաճան եւ այլն եւ այլն:

Ռոստոմին այնքանով է կարելի մարքսիստ անուանել, որքանով Քրիստափորին՝ նարոդնիկ եւ Զաւարեանին՝ անարխիստ: Փաստն այն է, սակայն, որ այդ մարդիկ ձգտում էին ձեւաւորել հայ ժողովրդի ազգային եւ հասարակական լիարժէք ազատագրութեան գաղափարախօսութիւնը: Եւ այդ մօտեցմամբ էլ նրանք հիմք դրեցին վիթխարի գաղափարական շարժման, որը տեսական դաշտում, մի կողմից, հեռու մնաց դոգմատիկութիւնից եւ ուտոպիականութիւնից, իսկ միւս կողմից՝ չընկաւ գործապաշտութեան եւ անսկզբունք պոլիտիկայնութեան գիրկը՝ գոյութիւնը իրադրային քղանցքների վրայ քարշ տալով: Դա մի գաղափարական շարժում է, որ համամարդկային արդի պատմութեան զգալի ժամանակահատուածում, տեւաբար քայլ պահելով ժամանակի ոգու հետ, իր գաղափարախօսական դաշտից շարունակ թօթափում է տեսական ժամանակավրէպ մանրամասնութիւնները եւ ինքնազտւում, բիւրեղանում է այդ նոյն ժամանակի մէջ:

Ահա թէ որտեղ պէտք է փնտրել Ռոստոմի նման անհատականութիւնների գաղափարական մեծութիւնը:

Առավոտ

Վիրտուալ հայրենիքի ջախջախումը, կամ իրականում ինչո՞վ է զբաղված «Առավոտ» օրաթերթը

Էդիկ Անդրեասյան

«Առավոտի» վերջին համարներն աչքի են ընկնում մի շարք «հետևողական» հրապարակումներով, որոնցից թերևս արժե առանձնացնել «Արևմտյան Հայաստանի հայոց համագումար» կազմակերպությանն առնչվող զույգ անդրադարձները (Տես «Առավոտ», 14 և 17 փետրվարի): Հատկապես ուշադրության է արժանի թերթի գլխավոր խմբագիր Ա. Աբրահամյանի «Ավազե դղյակներ» խմբագրականը, որ հետևել է նախորդ համարում լույս տեսած «Խորհուրդը կա, մնաց՝ հողերը» վերնագրով Նելլի Գրիգորյանի հոդվածին: Հարգարժան խմբագիրն, ասես միտումնավոր, հրապարակում է առաջին հայացքից ոչ այնքան կարևոր մի նյութ, իսկ ապա, սեփական նախաձեռնությամբ, այն փորձում է դարձնել քննարկման առարկա: Համաձայնենք, որ դա վաս լրագրողական հնարք չէ, բայց էականն այստեղ ոչ թե Ա. Աբրահամյանի հնարամտությունն է, այլ նյութի ընտրությունն ու մեկնաբանման, ընթերցողին հրամցման եղանակը:

Թող տպավորություն չստեղծվի, թե ցնցված ենք թերթի գլխավոր խմբագրի ու մյուս լրագրողների դարակազմիկ շեղևներից: Հենց այնպես, ձեռքի հետ գրված բաներ են, որոնք ամենամեծ ցանկության դեպքում էլ չեն կարող մրցակցել նույն «Առավոտ» թերթի բազմաթիվ հաջողված հրապարակումների հետ:

Պարզապես, ուշադրության են արժանի վերոնշյալ հրապարակումների՝ Արևմտահայաստանի և արևմտահայության խնդիրներին, հայ-թուրքական հարաբե-

ությունններին, հայոց պահանջատիրությանը, Հայոց ցեղասպանությանն ու հատուցմանը, մեկ ազգ՝ մեկ հայրենիք գաղափարին Ա. Աբրահամյանի գլխավորությամբ ցուցաբերված անլուրջ մոտեցումները: Մի պահ եկեք ենթադրենք, թե «Արևմտյան Հայաստանի հայոց համագումար» կազմակերպությունը և նրա ընդունած «Արևմտյան Հայաստանի հայոց ինքնորոշման հռչակագիրը» քաղաքական հիմքերից զուրկ (սակայն դա այնքան էլ այդպես չէ) իրողություններ են և այդ կազմակերպությունն էլ, ինչպես թերթն է գրում՝ *«...ըստ էության, ստվերային կառավարություն է, որը կոչված է տեր կանգնելու Արևմտյան Հայաստանի հայկական հողերին, եթե Թուրքիան մեր ֆուտբոլային կամ էլ չգիտեմ ինչ դիվանագիտությունից մի օր այնքան հուզվի, որ մեր պատմական հողերը վերադարձնի»:*

Ի՞նչն է այստեղ զայրացրել «Առավոտին», որ «փայտն առած», ընկել է պահանջատիրության զգացում ունեցող, թեկուզ և, ըստ Ա. Աբրահամյանի, անիրականանալի թվացող Միացյալ հայրենիքի վիրտուալ պատկերը փայփայող մարդկանց հետևից, ինչո՞ւ է ծաղրում նրանց: Մի՞թե այդքան ծիծաղելի է, որ ՄԱԿ-ի կողմից հայ ժողովուրդը ճանաչվել է որպես Հայկական լեռնաշխարհի բնիկ ժողովուրդ, մի՞թե Արցախի ամբողջականության, Ադրբեջանի և Թուրքիայի արևմտյան տարածքներում հայկական մշակութային հուշարձանների պահպանության, ջավախահայության խնդիրներն այնքան երկրորդական հարցեր են, որոնց հետաքրքրությունը չի կարող իր շուրջը հավաքել մի խումբ հայրենասերների: Գուցե թե այս կազմակերպության գործողությունները դեռևս անհրաժեշտ մակարդակով չեն համադրվում պետության արտաքին քաղաքականության ու քաղաքական կուսակցությունների գործունեության հետ: Բայց սա այլ խնդիր է, և, մեր կարծիքով, բոլորս միասին պետք է լուծումներ փնտրենք և ոչ թե «Առավոտի» հանգույն եղածը հողին հավասարեցնենք:

Չենք կարծում, թե Ա. Աբրահամյանն այն միամիտներից է, որ այս պարզ իրադրության մեջ դժվարացել է կողմնորոշվել: Ի վերջո կարելի էր ժամանակավորապես լռություն պահպանել: Բայց նրա ծայրահեղ պրագմատիզմն է տվյալ դեպքում հաղթանակել, ինչի հետևանքով էլ բացահայտվել է գլխավոր խմբագրի ու թերթի իսկական դեմքը:

Ինչո՞վ է իրականում զբաղվում «Առավոտը»: Հեռահար նպատակը, եթե դա այդպես որակենք, Լևոն Տեր-Պետրոսյանի և ՀՀՇ առաջին մեծության դեմքերի վարած «խխունջի քաղաքականության» գովազդումն է. «*Աշխարհի բոլոր հայերի համար թիվ 1 ազգային խնդիրն այստեղ, այս 29 հազար քառակուսի կիլոմետրի վրա նորմալ պետություն ունենալն է: Մնացածն ածանցյալ է*»,- գրում է Ա. Աբրահամյանը: Թե որքանով է խխունջի պատյանը հարմար աշխարհի բարիքներից օգտվել ցանկացող էակի համար, բնության խնդիրն է, բայց, գաղտնիք չէ, որ աշխարհի ողջ հայությունը, դեռ 20 տարի առաջ չէր էլ կարող երազել, որ 1991-ին անկախ հայրենիք կունենա, թեկուզ և մի խխունջի պատյանի չափ, նույնիսկ չէինք էլ ենթադրում, որ պայքարի արդյունքում ծնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Այսօր այդ ամենն իրողություն է: Ճիշտ այդպիսի իրողություններ են մեզնից ավելի ուշ սկսած և անկախության հասած ԱՊՀ երկրները, Աբխազիան, Հարավային Օսիան, հարավսլավական հանրապետությունները, Կոսովոն: Մի՞թե այս ամենը քաղաքական հարափոփոխ գործընթացի արգասիք չէ, մի՞թե պարզ չէ, որ այս կարգի ամեն մի փոփոխության պետք է պատրաստ լինի գալիք սերունդն ու ընդունի մարտահրավերը: Հետ է,

իհարկե, պայմանում թաքնվել ու հուսալ, որ շուտով կիզորանանք: Պայմանն էլ հենց նրա համար է պայման, որ մի կերպ գոյությունդ քարշ տաս, այլ ոչ թե հզորանաս ու հզորների հետ հարց լուծես:

Մի հանգամանք ևս: Մեզանում արդեն շատ է խոսվել մեկ ազգ՝ մեկ հայրենիք միասնության մասին, և, թվում է, արդեն ճիշտ ուղու վրա ենք այդ կարգախոսն ըմբռնելու առումով: Սակայն, ինչպես տեսնում ենք «Առավոտի» վերջին հրապարակումներում, դեռևս փորձեր են արվում տարանջատելու հայաստանցուն՝ ղարաբաղցուց, արևելահային՝ արևմտահայից, ջավախքցուն՝ քյավառցուց: Ջանք չի խնայվում հասկապես վերջին 20 տարիներին Հայաստանը հարկադրաբար լքած մեր հայրենակիցներին, ովքեր այստեղ որակվում են որպես «սուտի սփյուռքահայեր», հակադրելու ողջ հայությանը: Սա կործանարար ընթացք է և որևէ լավ բանի չի կարող հանգեցնել: Առավել ևս՝ այդ կերպ թերագնահատվում է հայկական սփյուռքի դերը Հայոց պետականության ստեղծման ու ամրապնդման, Արցախյան ազատագրական պայքարի հաղթանակների կերտման, մեր ժողովրդի բազմաթիվ կենսահարցերի՝ այդ թվում նաև Հայոց ցեղասպանության ու Հայ դատի հետապնդման գործում: Հետաքրքիր է իմանալ, ո՞ւմ և ի՞նչ հույսով է Արամ Աբրահամյանը փորձում հզորանալ իր պայմանում, երբ ոչ միայն սփյուռքահայության թեկուզև վիրտուալ հայրենիքի գաղափարը, այլև այսօրվա անկախ Հայաստանի հեղինակությունը. «*Անցած շաբաթ,- գրում է թերթը,- ուրախությամբ իմացանք ու շաբաթ օրը տեղեկացրինք մեր ընթերցողներին, որ Արևմտյան Հայաստանի ստվերային կառավարությունը վաղուց արդեն գոյություն ունի. ճիշտ է, գործում է հույժ գաղտնիության պայմաններում: Դա, ինչ խոսք, հեռատես քայլ է արտերկրում ապրող մեր հայրենակիցների կողմից: Բացատրեմ, թե ինչու: Պատկերացրեք, որ վաղը-մյուս օրը թուրքերը մեզ վերադարձնում են մեր պատմական հողերը և բոլոր փոխհատուցումներն էլ մուծում են: Ի՞նչ պետք է մենք անենք այստեղ՝ Հայաստանում: Ստիպված պետք է ընտրություններ հայտարարենք թափուր մնացած արևմտահայկական պաշտոնների համար: Իսկ թե ինչ է տեղի ունենում մեզանում ընտրություններից առաջ, ընտրությունների ժամանակ և ընտրություններից հետո՝ բոլորիս աչքի առաջ է: Հետո էլ պաշտոնյաները պետք է մրցեն, թե ով է ավելի շատ կաշառք մուծելու, ասենք՝ Կարսի քաղաքապետի կամ Տրապիզոնի մախսապետի պաշտոնների համար: Իսկ օլիգարխները մրցելու են, թե ով է ավելի ճոխ «օբյեկտ» կառուցելու Մասիս սարի վրա: Եվ ահա, այդ բոլոր անցանկալի երևույթները կանխելու համար արտերկրում ապրող մեր եղբայրները բոլոր պաշտոններն արդեն իրար մեջ բաժանել են և հիմա սպասում են, որ Թուրքիան հայտարարի մեր հողերը վերադարձնելու մասին, որպեսզի իրենք հանգիստ եւ սոլիդ ձեւով գնան-գբաղեցնեն իրենց կաբինետները»:* Դե ի՞նչ: Հրաշալի նյութ թուրքական մամուլի համար: Ոչ Էրդողանի, ոչ էլ Գյուլի մտքով կանցներ, որ այսքան հեշտ է Հայոց ցեղասպանության ու հատուցման հարցերը շրջանցելը: Հիմա նրանք հանգիստ կարող են հեռագրել աշխարհի հզորներին. «Ի՞նչ եք ձեր անցավ գլուխը դնում ցավի տակ: Տեսեք, սա է հայերի լրջությունը»:

Կոնկրետ այս դեպքում, կարծում ենք, բանը դրան չի հասնի, քանի որ Էրդողանն ու Գյուլը, դժվար թե, Ա. Աբրահամյանի ջղաձգումներն ընդունեն ի գիտություն: Նրանք անհանգստանալու ավելի լուրջ պատճառներ հաստատ ունեն:

ՎՃՌԱԿԱՆ ԺԱՄԻՆ

Անձնական յուշեր ու ադրումներ

Յովհաննէս Քաջազնունի

(Շարունակություն)

Դեկտ. մէկին, ուշ գիշերով - թէ հետեւեալ առաւօտեան, լաւ չեմ յիշում - կառավարութիւնը պատասխանեց Լեգրանին, թէ պատրաստ է յանձնել իշխանութիւնը Ռազմա-յեղափոխական կոմիտէին, մի քանի պայմաններով:

Լեգրանը առանց առարկութիւնների ընդունեց պայմանները եւ դեկտ. երկուսին, կէսօրից յետոյ, Ս. Վրացեանի մինիստրութիւնը դուրս եկաւ կառավարական շէնքից: Իշխանութեան գլուխն անցաւ - ժամանակաւորապէս, մինչեւ Ռազմա-յեղափոխական կոմիտէի Երեւան հասնելը - Դրօն, որ Հ. Տէրտէրեանի հետ միասին պիտի մտնէր Հայաստանի կոմիսարիատի - խորհրդային կառավարութեան - մէջ. այս էր Լեգրանի հետ կնքուած համաձայնութեան պայմաններից մէկը:

Փաստը կատարուեց. Հայաստանն յանձնել էինք բոլշեւիկներին...

* * *

Շատ ծանր օրեր էին այն օրերը - սուգի օրերը...

Ճնշուած էինք ու դառնացած ամենքս: Հասկանում էինք, որ մեր կեանքի դատը, երկար տարիներով երազած ու ահռելի զոհաբերութիւններով իրականացրած մեր վայրկենական անկախութիւնը յանձնում ենք այնպիսի ձեռների, որոնց վրայ հարկաւոր վստահութիւնը չունենք...

Որքան մտաբերում եմ, ամենից քիչ մտահոգուած երեւում էր Դ-ն*:

Իր մշտական, բնազդային ու անուղղելի ռուսասիրութիւնը - աւելի ճիշտ՝ ռուսամոլութիւնը - փրկում էր Դ-ին վիատութիւնից: Մեզ փոխարինողը ռուսն էր - սա արդէն բաւական էր Դ-ի համար: Բոլշեւիզմը, իբրեւ այդպիսին, քիչ էր հետաքրքրում նրան: Բոլշեւիկ թէ մենշեւիկ, Դենիկին, Տրոցկի թէ Վրանգել - նոյնն էին Դ-ի աչքում, հաւասարապէս ընդունելի - թերեւս Դենիկինը աւելի ընդունելի քան Տրոցկին-: Բաւական էր, որ սրանք բոլորն էլ Ռուսաստան էին ներկայացնում:

Ռուսը թուրքի բնական թշնամին է, հետեւաբար՝ հայի բնական դաշնակիցը - սա էր Դ-ի ելակէտը:

Իրեն յատուկ ինքնավստահութեամբ Դ-ն կազմում էր արդէն մտքի մէջ շատ հրապուրիչ ծրագիր. թէ ինչպէս՝ ռուսների օգնութեամբ՝ սանձահարում է թուրքերին, վերահաստատում է հայկական իշխանութիւնը Նախիջեւանում, Սուրմալուում, Ծիրակում ու Ղարսում, ապա անցնում է հայկական վիլայեթները Թիւրքիայում... Ծրագրում էր եւ ոգեւորւում մօտալուտ յաղթութիւններով:

Դ-ի միակ հոգսը, միակ մտածմունքը այն էր, կարծես, որ իր կուսակցական ու զէնքի ընկերները չտուժեն - կամ քիչ տուժեն - բոլշեւիկներից: Մնացածի մասին ապահով էր, լաւատես:

Համեմատաբար լաւատես էր երեւում նաեւ Ս. Վ.-ը**:

Սա եւս, որոշ վերապահումներով, «ռուսական օրիենտացիայի» կողմնակիցներից էր: Չունէր

Դ-ի բացարձակ վստահութիւնը ռուսների վրայ, աւելի զուսպ էր, հաշուի էր առնում Մօտաւոր Արեւելքի քաղաքական բարդ կացութիւնը, հաշուի էր առնում թուրք-բոլշեւիկեան բարեկամութիւնը, չէր անտեսում վտանգը... բայց եւ այնպէս, աւելի լաւատես էր երեւում, քան յոռետես:

Հակառակ Դ-ին, Ս-ը հիմնում էր իր յոյսերը գլխաւորապէս այն հանգամանքի վրայ, որ եկող ռուսները սոցիալիստներ են: Հաւատում էր - կամ ուզում էր հաւատցնել իրան - որ սոցիալիստական հողի վրայ մենք, աշխատաւոր հայութեան առաջնորդներս, կը գտնենք բոլշեւիկների հետ մի ընդհանուր լեզու, կենակցելու եւ նոյն իսկ աշխատակցելու հնարաւորութիւն: Եւ այն հանգամանքը, որ Լեգրանը համաձայնեց մտցնել Կոմիսարիատի մէջ նախկին դաշնակցական կառավարութեան կազմից Դրոյին ու Տէրտէրեանին, այս հանգամանքը կարծես գալիս էր հաստատելու Ս-ի լաւատեսութիւնը:

Շատ դժուար էր հասկանալ Ռ. Մ-ին***: Եւ ոչ միայն այն պատճառով, որ Ռ-ը առհասարակ անընդունակ էր կամ գիտակցաբար խոյս էր տալիս իր մտքերը որոշակի արտայայտելուց, այլ եւ այն պատճառով, որ կարծես ինքն էլ լաւ չէր հասկանում, թէ ինչ է ուզում:

Յիշում եմ՝ կառավարութեան շէնքումն էինք, սպասում էինք, որ խորհրդակցութիւնը բացուի: Ռ-ը անհանգիստ ետ ու առաջ էր անում սենեակի մէջ, անընդհատ վառելով պապիրոսը պապիրոսի ետեւից:

Հարցրի, թէ ինչ մտքերի է:

- Ինչ վատ բան է, ասաւ, երբ մարդ չգիտէ, թէ ինչ պիտի անէ...

Ասաւ մի յուսահատ ժեստով, անիմաստ ու շուար ժպիտը երեսին:

Ռ-ը ամենից լաւ տեղեակ էր մեր բանակի կազմալուծման մասին, ամենից լաւ գիտէր թէ կռուել չենք կարող: Բայց կարծես քաջութիւն չունէր հարկաւոր եզրակացութիւններն անելու: Չէր ասում, թէ պէտք է դիմադրենք, բայց համաձայնելու առաջարկ էլ չէր անում... Չէր հասկացում թէ, վերջապէս, ինքը ի՞նչ է ուզում, ի՞նչ ելք է ցոյց տալիս, ո՞րն է գերադասում:

Տեսնում էի, որ տանջւում է խորապէս: Հասկանում էի իր վիշտը, բայց եւ սաստիկ բարկանում էի մտքիս մէջ, երբ յիշում էի, թէ որքան կտրուկ, անվերապահ ու անշրջահայեաց էր այս նոյն մարդը ուրիշ պարագաներում... Իսկ այսօր, փորձութեան այս վճռական ժամին, երեխայի պէս կորցրել է իրեն, ժպտում է, հիւանդագին ու անկապ նախադասութիւններ թոթովում:

Հ. Օ-ը**** փոքրամասնութեան մէջ էր: Ոչ մի հաւատ չունէր բոլշեւիկների վրայ, ոչ մի լաւ բան չէր սպասում նրանցից եւ հակառակ էր որեւէ համաձայնութեան: Պէտք է զէնքի դիմել ու կռուել մինչեւ վերջը, ասում էր նա: Չէր ասում, թէ կարող ենք յաղթել, բայց պարտութիւնը կռուի մէջ գերադասում էր խաղաղ պարտութեան: Չէր հասկացում սակայն, թէ ո՞րն է այն «վերջ»ը, որից յետոյ պիտի թափենք զէնքերս, իբրեւ կռուի մէջ յաղթուածներ... Մեզ թւում էր, թէ արդէն յաղթուած ենք:

Հ-ի խօսքը թերեւս կարողանար ներշնչել ընդդիմադրական տրամադրութիւն կամ զօրեղացնել եղածը, եթէ մի քիչ աւելի շեշտուած լինէր, պարունակէր մէջը մի քիչ աւելի հաւատ, կամք ու թափ: Բայց այդ կամքն ու թափը չկային: Առաջարկը՝ իր էութեամբ շատ վճռական էր, բայց խօսքը՝ տժգոյն ու տարտամ: Կարծես ինքն էլ չէր հաւատում իր ասածներին ու ասում էր, որովհետեւ պէտք էր համարում ասել... կարծես մի ձեւական պարտականութիւն էր կատարում ակամայից, ի պաշտօնէ, գիտակցելով հանդերձ, որ առաջարկը չպիտի ընդունուի - գուցէ շատ էլ չցանկանալով, որ ընդունուի...:

Հասկանալի է, որ այսպէս արտասանուած խօսքը լսուեց սառն լռութեամբ ու արձագանգ չգտաւ նոյն իսկ տատանուող մտքերի մէջ:

Ամենից անհաշտը Ա. Չ-ն***** էր:

Այն կիրքը, համոզմունքի այն ուժգնութիւնը, որ պակասում էր Օ-ին, արտայայտւում էր անզուսպ ու բուռն թափով Ա-ի ամէն մի խօսքի մէջ: Սա օրգանապէս չէր կարող տանել բոլշեւիզմն ու բոլշեւիկներին: Ըստ Ա. Չ-ի՝ աշխարհի ամբողջ կեղտը ու ամեն տեսակի չարիքները կուտակուած են բոլշեւիզմի մէջ ու բոլշեւիկների շուրջը: Ինքը երկար ամիսներ ապրել էր բոլշեւիկեան Ռուսաստանում, մօտից տեսել էր բոլշեւիկների գործադրած մեթոտները ու անձնապէս շատ տուժել նրանցից: Նրա աչքը վախեցած էր, սիրտը անգամ չէր կարող լսել սառնասրտութեամբ - ճիշտ այնպէս, ինչպէս ցուլը չի կարող առանց զայրոյթի տեսնել կարմիր լաթը...

Այս հանգամանքը մեծապէս վնասում էր Չ-ի խօսքին:

Տեսնում էինք, որ մարդը պարզապէս կուրացած է կիրքից, կորցրել է մտքի հաւասարակշռութիւնը եւ զգաստ դատելու ընդունակութիւնը: Նրա տուած տեղեկութիւնները բոլշեւիկեան ռեժիմի մասին համարում էինք միակողմանի ու չափազանցրած, իսկ դատողութիւններն ու գնահատումը՝ ծայրայեղօրէն աչառու:

Խեղճ Ա-ը վրդովւում էր ու զայրանում մեր անհասկացողութեան հանդէպ: Բայց զայրոյթը այն միջոցը չէ, հարկաւ, որով կարելի է համոզել մարդկանց:

Անհաշտների թւումն էին նաեւ Ա. Յ-ը եւ Ս. Ա-ը******:

Ա. Յ-ի տեսակէտը պարզապէս կուսակցական էր,- կուսակցական արժանապատուութիւնն էր, որ ըմբոստացել էր նրա մէջ եւ մղում էր դէպի զէնք, դէպի կռիւ:

- Էլ ի՞նչ յեղափոխական կուսակցութիւն ենք, բացականչում էր նա պարլամենտական ֆրակցիա-

յի նիստում, եթէ թոյլ պիտի տանք, որ առանց դիմադրութեան՝ զինաթափ անեն մեզ...

Շատ էր վրդովուած տեղի տրուողների դէմ: Տրամադրութիւնը ռազմական էր: Ոչ մի համաձայնութիւն բոլշեւիկների հետ: Թող տիրեն երկրին զէնքով, եթէ կարող են: Մեր գործն է՝ պինդ փակել դռները նրանց առջեւ: Եթէ հակառակն անենք, ոչինչ չենք շահի, միայն մեր փոքրոգութիւնը ցուցադրած կը լինենք:

Լաւ չեմ յիշում, թէ ինչպէս էր հիմնաւորում իր տեսակէտը Ս.-ը: Հիմնաւորումը հաւանօրէն նոյնն էր, ինչ եւ նախորդներինը - թերեւս աւելի լաւ տրամաբանուած ու ձեւակերպուած:

Բայց սրա խօսքն էլ մնաց առանց արձագանգի:

Կասկած չկար, որ փոքրամասնութիւնը իրաւունք ունէր յոռետես լինելու,- այդ հասկանում էինք ամենքս, բայց որովհետեւ նոյն փոքրամասնութիւնը չէր կարողանում ցոյց տալ որեւէ գործնական ելք, երկիրը օրհասական դրութիւնից դուրս բերելու համար, ուստի եւ մնաց փոքրամասնութիւն:

Մեծամասնութիւնը, աւելի կամ պակաս ծանր տատանումներով, ընդունեց համաձայնութեամբ ու խաղաղօրէն տեղի տալու որոշումը:

Չեմ կարող վերյիշել, թէ թուականօրէն ինչպէս բաժանուեցին ձայները: Գիտեմ միայն, որ մեծամասնութիւնը ճնշող էր, վճռական:

* * *

Մի մեծ դառնութիւն է մնացել այն օրերից սրտիս խորքում - մի հիասթափութիւն, որից չեմ կարողացել ազատուել մինչեւ այսօր եւ չգիտեմ՝ պիտի ազատուե՞մ արդեօք երբ եւ իցէ:

Հիասթափուել էի ու դառնացել, որովհետեւ տեսնում էի, որ ընկերներիցս ոմանք - սրանց թւում նաեւ պատասխանատու մարդիկ - ի յայտ չեն բերում հոգեկան այն արիութիւնը, բարոյական այն կորովը, որ, թւում էր ինձ, պարտաւոր էինք ունենալու փորձութեան այս ծանր ժամին:

Տեսնում էի, որ ընկերներիցս ոմանք մտահոգուած են անձնական հոգսերով շատ աւելի, քան թւում էր ինձ - իրաւունք ունէին: Տեսնում էի, որ չկայ այն անձնամոռացութիւնը, պարտաճանաչութեան ու պատասխանատուութեան այն բարձր գիտակցութիւնը, որ այնքան անհրաժեշտ էր մեզ այդ պահուն: Տեսնում էի, որ անձնական ու ընտանեկան ապահովութեան խնդիրը կաշկանդել էր ոմանց - չեմ ուզում ասել՝ շատերի - միտքը, ճնշել կամքը, խոժոռել դէմքերը...

Մասնաւորապէս՝ փախչելու ու փախուստի մէջ ապահովութիւն որոնելու հոգսն էր, որ վրդովեցրել էր ինձ ամենից աւելի: Շատերը մտածում էին արդէն այդ ուղղութեամբ, թէեւ չէին արտայայտւում պարզօրէն, բարձրաձայն: Մտածում էին, քաշւում էին անկիւնները, մեկուսանում, փսփսում իրար ականջի...

Յիշում եմ, պարլամենտական ֆրակցիայի նիստում Վ. Ն-եանը******* հարցրեց յանկարծակի.

- Լաւ, բայց մենք անձնապէս ի՞նչ պիտի անենք...

Հարցրեց ու շուար նայեց չորս կողմը:

Եւ ահա, ընդհանուր ու շատ ծանր լռութեան մէջ, Ա. Ս-ը մի բնորոշ խօսք ասաց.

- Մնում է, որ ամեն մարդ ինքը հոգայ իր մասին:

Փախչելու կամ թաքնուելու խօսքը չարտասանուեց, թէեւ մի քանիսի մտքում որոշումը յղացուած էր արդէն: Այդ իսկ նիստին - դեկտ. 1-ի գիշերը - աչքի էր ընկնում երկու-երեք մարդու բացակայութիւնը. սրանք կամ հեռացել էին Երեւանից կամ հեռանալու պատրաստութիւնների մէջ էին:

Ասում եմ, շուրջս նկատուող փախչելու տենչը դառնացրել էր հոգիս: Եթէ չքաշուեմ իսկական խօսքից - խոր զզուանք էր պատճառել ինձ...

Թերեւս անարդար էի - ու այսօր էլ անարդար եմ - ընկերներիս հանդէպ:

Եւ շատ հաւանական է, որ անարդար էի. դժբաղդութեան մէջ մարդիկ դառնում են առհասարակ կասկածոտ ու վատատես, կորցնում են անաչառ դատելու ընդունակութիւնը:

Գուցէ վախը չէր - կամ միայն վախը չէր - որ մղում էր ընկերներիս Հայաստանից դուրս, բոլշեւիկներից հեռու: Եւ գուցէ հէնց այդ վախն էլ մարդկայնօրէն հասկանալի պիտի լինէր ու անդատապարտելի:

Եթէ ես ինքս վախ չունէի, գուցէ դա նրանից էր միայն, որ անձնապէս այնպիսի ծանր կորուստներ էի ունեցել արդէն, որ կեանքը դարձել էր ինձ համար իսկապէս մի անարժէք բան: Եւ ինքնապահպանման բնազդը, որ այնքան տիրօրէն խօսում էր միւսների սրտում, գուցէ դա աւելի առողջ երեւոյթ էր, քան իմ անտարբերութիւնը սպառնացող վտանգի հանդէպ:

Գուցէ այն, որ, հեռու լինելով Հայաստանից մայիսի ապստամբական փորձերի ժամանակ, ես անհատապէս ոչ մի մասնակցութիւն չէի ունեցել բոլշեւիկների դէմ գործադրուած խստութիւնների մէջ, հետեւապէս՝ պակաս վտանգուած եմ - բոլշեւիկների վրիժառութիւնից: Գուցէ ես անգիտակցօրէն հաշուի էի առնում այդ հանգամանքը ու համեմատաբար ապահով էի զգում ինձ:

Գուցէ այն, որ ես մի քիչ աւելի վստահութիւն ունէի բոլշեւիկների խելքի ու քաղաքական տաքտի վրայ, ուրեմն եւ մեզ սպառնացող վտանգը առ հասարակ պակաս մեծ էի համարում, քան բացարձակ յոռետեսները:

Գուցէ այն, որ կոմունիստական վարդապետութիւնը - ինքն ըստ ինքեան ու անկախ բոլշեւիկեան գործելակերպից - շատ մօտ էր իմ սեփական դաւանանքին եւ

այս իսկ պատճառով ես չունէի բոլշեւիկների հանդէպ այն բացարձակ, այն տարերային ատելութիւնը, որով բռնկուած էին ընկերներիցս շատերը...

Հաւանական է, որ այս բոլորը - գուցէ եւ ուրիշ զուտ անհատական շարժառիթներ, որոնք դուրս են մնում գիտակցութեանս սահմանից - ով գիտէ, մարդու հոգին այնքան մութ ու բարդ բան է - հաւանական է, այս բոլորը ազդել էր մեծապէս իմ ըմբռնողութեան ու դատողութեան վրայ, ծնունդ էր տուել մի ուրոյն հոգեկան կացութեան, որ ուրիշները չէին կարող ու պարտական էլ չէին բաժնել...

Գուցէ եւ այդպէս է:

Բայց՝ իրաւացի թէ անիրաւացի՝ ես այն համոզումին էին, որ մեզանից ոչ ոք չպիտի փախչի, ամէն մարդ պէտք է մնայ իր տեղը:

Եթէ բոլշեւիկները հնարաւորութիւն տան, մենք պարտական ենք աշխատելու մեր երկրի մէջ, մեր ժողովուրդի համար:

Եթէ պատասխանատուութեան հարց դրուի, մենք քաջութիւն պիտի ունենանք այդ պատասխանը տալու,- նոյն իսկ մեր կեանքի գնով:

Եթէ վատ բան ենք անում, յանձնելով երկիրը բոլշեւիկներին, ապա այդ վատ արարքի հետեւանքները առաջի հերթին պիտի կրենք մեր անձերի վրայ:

Եթէ բոլշեւիզմը չարիք է ու բոլշեւիկեան իշխանութիւնը - դժբախտութիւն, այդ չարիքն ու դժբախտութիւնը պէտք է բաժանենք ժողովուրդի հետ եւ չպիտի թոյլ տանք, որ ասեն մեր ետեւից. «Վտանգի օրերին լքեցիք մեզ, թողիք մենակ ու ինքներդ փախաք ապահով տեղեր»:

Կար եւ մի ուրիշ հանգամանք, որ ըմբոստացնում էր իմ խիղճը. փախչելու համար հարկաւոր էին միջոցներ - կառք, ձի, վստահելի ուղեկիցներ, ապահով կայաններ...

Մեր - այսինքն՝ կառավարութեան ու կուսակցութեան - ունեցած կամ մեզ տրամադրելի միջոցները շատ չնչին էին, հազիւ բաւարարէին մի-երկու տասնեակ մարդու... ի՞նչպէս պիտի բաշխուէին, ո՞ւմ պիտի տրամադրուէին այդ սահմանափակ միջոցները:

Ամենից աւելի վտանգուածներին, հարկաւ:

Բայց որո՞նք էին ամենից աւելի վտանգուածները, ո՞վ պիտի անէր ընտրութիւնը եւ ի՞նչ չափով չափէր:

Վտանգի ժամին ամէն մի մարդ - խօսքս սովորական մահկանացուների մասին է եւ ոչ հերոսների - տրամադիր է կարծելու, թէ ինքն է ամենից աւելի վտանգուածը կամ, առնուազն, վտանգուած է ոչ պակաս, քան միւսները:

Վտանգուածները կամ իրենց վտանգուած համարողների թիւը - այսինքն՝ փախչելու կարիք կամ ցանկութիւն ունեցողների թիւը - շատ աւելի էր, քան փախուստի միջոցները:

Ո՞ւմ բաւարարել եւ ո՞ւմ մերժել:

Անկարելի չէր, որ՝ վերջի հաշուին՝ օգտուէին նրանք, որոնք ամենից մօտ էին գտնուում միջոցներին կամ ամենից շուտ կը տիրանային նրանց - մի քանի արտօնեալ անհատներ:

Ապա կը փախչէին նրանք, որոնք ունէին անձնական միջոցներ կամ առանձին ճարպիկութիւն, կապեր ու ծանօթութիւններ: Սրանց թիւն էլ չէր կարող մեծ լինել:

Իսկ մնացածնե՞րը, այսինքն ահագին մեծամասնութի՞ւնը...

Ես արտօնեալների թւումն էի, այսինքն՝ մէկն էի նրանցից, որոնք հնարաւորութիւն ունէին փախուստի համար որոշ յարմարութիւններ ձեռք բերելու: Բայց ի՞նչպէս օգտուէի այդ հնարաւորութիւններից, եթէ ետեւս թողնելու էի պակաս արտօնեալներին, որոնք պիտի համարէին իրենց զրկուած ու լքուած եւ թերեւս պիտի ասէին, թէ իրենց հաշուին է, որ փրկում եմ իմ կեանքը...

* * *

Այս մտածումները խռովել էին հոգիս, բայց չէի արտայայտում, չէի ուզում նեղին դնել մէկին կամ միւսին: Պարագաները այնպիսի էին, որ «ամէն մարդ ինքը պէտք է որոշէր իր անելիքը»: Այս խօսքը ասաց ֆրակցիայի նիստում Ս. Ա-ն եւ ոչ ոք չբողոքեց:

Ամէն մարդ պիտի հետեւէր իր խղճի ձայնին:

Անշուշտ, վտանգ կար, գուցէ եւ մեծ վտանգ: Մնալու պարտականութիւնը զուտ բարոյական բնոյթ ունէր, նուրբ ու անշոշափելի, թերեւս եւ վիճելի շատերի համար: Իսկապէս, անհատական ըմբռնողութեան հարց էր սա: Եթէ մէկը համարում էր իրեն վտանգուած, ուզում էր ու կարող էր խոյս տալ վտանգից, ո՞վ եւ ի՞նչ իրաւունքով պիտի բռնէր ձեռքը:

Հարկաւ, պատերազմի դաշտում, կռուի ժամանակ, ամէն մի զինուոր իրաւունք ունի պահանջելու, որ իր ընկերը չլքի շարքերը: Բայց մենք կռուի մէջ չէինք, մենք արդէն անձնատուր էինք եղել ու թափել զէնքերս: Մնա՞լ միւս զինակիցների հետ միասին յաղթողի սպառնալիքի տակ, թէ՞ փախուստով փրկել սեփական ազատութիւնը, գուցէ եւ կեանքը - ահա թէ ինչպէս էր դրուած խնդիրը:

Ես որոշել էի արդէն իմ անելիքը եւ լուռ դիտում էի շուրջս կատարուող իրարանցումը:

---

* Դրօն:

** Ս. Վրացեանը:

*** Ռուբէն Տէր-Մինասեան:

**** Համօ Օհանջանեան:

***** Արտ. Չիլինգարեան - Ռ. Դարբինեան:

****** Արշ. Յովհաննիսեան եւ Սարգիս Արարատեան:

******* Վահ. Նաւասարդեան:

ՓԵՏՐՎԱՐ—ՄԱՐՏ 1
Adresse
XIX ՏԱՐԻ
ԴՐՕՇԱԿ
№ 2-3 (200)
„Droschak"
de la Fédération
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԻ ՕՐԳԱՆ
ՍՈՍԻԼԻՊԻՆ—ՎՕՐՈՆՑՈՎԵԱՆ ՌԷԺԻՄԸ ԵՒ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ»

Ա՛ի վայրենի հալածանք է սկսած հայ ժողովրդական կազմակերպութեան դէմ: Բոլոր սև ուժերը միացել են՝ նրա գոյութիւնը վտանգելու համար: Տաճկաստանում, սահմանադրական ռէժիմի ներքոյ դեռ չեն մարսում նրա բացարձակ, հրապարակային գործունէութիւնը: Ռուսաստանում, Պետերբուրգից մինչև Թիֆլիս անխնայ ճարակում են հայ ինտելիգենտ երիտասարդութիւնը «դաշնակցական» որակումի տակ: Պարսկաստանում... այո՛, նոյնիսկ Պարսկաստանում, «Դաշնակցութեան» ուրուականը հանգիստ չէ տալիս համառուսական ռէակցիայի պարագլուխներին, որոնք իրենց քսու մամուլի մէջ տենդենցեօզ նենգամտութեամբ հռչակում են դաշնակցականների «ղեկավարող դերը» պարսկական ներքին փոթորիկներում...

Կովկասում, ռէակցիայից քաջալերուած, գլուխ է բարձրացրել նոյն կազմակերպութեան դէմ՝ հայ ու վրացի հասարակութիւնների տականքը: «Դաշնակցութեան դէ՞մ» ամօթալի մարտակոչը հնչում է նորէն մեր եզակի մթնոլորտում, ուր ազատական թռիչքների հետ այնքան ուժեղ են և դաւաճան տրամադրութիւնները...

Անգամ եւրոպական կապիտալիզմի «խստալուրջ» օրգաններից՝ նետում են Դաշնակցութեան հասցէին ամենածանր ամբաստանութիւններ: Դաշնակցութիւնը հանդէս է գալիս որպէս մի վիթխարի, խորտակիչ ուժ և պէտք է անհետացնել նրան – ինչ գնով էլ որ լինի. այդպէս են վճռել հայ ժողովրդի բազմապիսի թշնամիները: Եւ ահա՝ մինչդեռ դաշնակցական գործիչներին քմահաճօրէն բանտ են նետում ազատագրուած Տաճկաստանում, մինչդեռ ռուսական Սեւ-հարիւրեակը, բռնուած հակահայ ու հակադաշնակցական մի վայրենի ատելութեամբ՝ քարոզում է կախաղաններ ու տաժանակիր աշխատանք,- հոհենցօլլերնեան Գերմանիայի մի թափառական հրապարակախօս, հանդիսանալով Եւրոպայի առաջ իբրև հաւատարիմ porte-parole սուլթանական ռէակցիայի, մի շարք յօդուածներում, «Բերլիներ Տագեբլատտ» ազդեցիկ օրգանի մէջ, հիւսում է անհնարին զրպարտութիւններ հայութեան հասցէին և հրաւիրում է ռուս ու թիւրք կառավարութիւններին՝ ընդհանուր ճիգերով տապալել հայ մարտական կուսակցութիւնը, սանձ դնել «յաւիտենօրէն ըմբոստ» ու «անջատական» հայ ժողովրդի ախորժակներին: Նրանք գտնում են, որ «ազատութեան» ու «երջանկութեան» այն չափը, որին արժանացաւ հայ ժողովուրդը օսմանեան յեղափոխութեամբ, չափազանց շատ է այդ ժողովրդի համար, որը ստրկական իր գոյութեան մէջ արդէն իսկ «վտանգաւոր» էր, իսկ այժմ, ազատուելով, կարող է յորձանք տալ դէպի աշխարհի չորս բոլորը և հեղեղել, և՝ նաւաճել...

Թիւրքական ռէակցիան դժգոհ է, որ «դաշնակցականները» ուզում են խօսել ու գործել իրենց հայրենիքում, որպէս ազատ մի երկրի մէջ: Ռուսական Սև-հարիւրեակը համոզուած է, կամ, յամենայն դէպս, հաւատացնում է, որ Դաշնակցութիւնը պիտի վերականգնէ հայկական թագաւորութիւնը մինչև Վօրոնէժ: Գերմանացի հրապարակախօսը, բացի այդ բոլորից, հասկացնում է նաև, որ դաշնակցական կոմիտէները թիւրքաց Հայաստանում ճնշում են միսիոնարների գործունէութիւնը, ըմբոստութեան կրակ են արծարծում հայ նորածիլ սերունդի մէջ, և ձգտում են թումբ դնել պանգերմանիզմի յառաջխաղացութեան, Drang nach Osten-ին...

Սոսլիպին-Վօրոնցօվեան ռէժիմը եւ «Դաշնակցությունը»

Ապահովաբար կարելի է ասել, որ երբէք, ոչ մի յեղափոխական կազմակերպութիւն, իր գործունէութեան ընթացքում չի յուզել այդքան կրքեր, չի յարուցել այդքան թոյն ու ատելութիւն, չի տեսել իր դիմաց յետադէմ ուժերի այդքան ահեղ ու այլազան մի բանակ:

Հպարտանա՞լ... Ոչ: Չափազանց շատ է տուժել հայ ժողովուրդը այդ համատարած ու գազանային որսախուճապից, որպէսզի մենք փորձենք պարծենալ մեր «ահազդեցիկ մեկուսացումով», իբսենական մեր ճակատագրով:

Բոլորը մեր դէմ, հայ ժողովրդի դէմ, հայ ազատութեան ու վերածնութեան դէմ, բոլորը՝ որոնց ատելի է հայ ժողովուրդը իր քաղաքակրթական հակումներով և իր միակ յեղափոխական կազմակերպութեամբ...

Ահա մի պարլամենտ, աշխարհի ամենահզօր բռնապետութեան պարլամենտը, ռուսական Դուման՝ ամբողջ մի շարք նիստերի ընթացքում զբաղուած Դաշնակցութեամբ: Դաշնակցութիւնը և նրա հետ կապուած «հայկական սեպարատիզմը» (անջատականութիւնը) կազմում են, արդարև, «Կովկասեան

հարցապնդումի» ու յարուցած վիճաբանութիւնների գրեթէ կենտրոնը:

Հնչում են Դումայի ամբիոնից սարսափելի ամբաստանութիւններն այդ կազմակերպութեան դէմ, գալիս են և պատասխանները կովկասեան փոխարքայական պալատից: Ստացւում է մի այլանդակ շփոթ: Երկու ծայրայեղ, տրամագծօրէն հակադիր կարծիքներ բախւում են իրար: Մէկը՝ ծայր-աջակողմը, ներկայացնում է Դաշնակցութիւնը որպէս այն ահեղ ուժը, որ պատրաստ է հարիւր հազարանոց իր բանակով արշաւել... մինչև Վօրօնէժ: Միւսը ցուցադրում է նոյն կազմակերպութիւնը, որպէս արդէն յաղթահարուած, չգոյ մի գոյութիւն: Եւ առաջին կարծիքը, համաձայն իր ըմբռնումին, թելադրում է արեան բաղնիքներ սարքել Կովկասում, միանգամընդմիշտ խեղդել Դաշնակցութիւնը, որպէսզի Ռուսաստանը հարկադրուած չը լինի ապագայում «վերստին նուաճել Կովկասը»...

«Հոկտեմբերեան» մեծամասնութիւնը, որից կախուած է խնդրի ելքը, ուզում է հետևել juste milieu-ի, «միջին ճանապարհի» քաղաքականութեան: Նա մերժում է քէարկել աջակողմեանների եզրակացութիւն-բանաձևը, բայց միևնոյն ժամանակ հրահանգում է, որ փոխարքայութիւնը ոչնչացնի և կովկասեան կառավարութիւնը ստորադրի անմիջապէս մինիստրական խորհրդին: Հոկտեմբերեան մակեավելիզմը «փրկում է երևոյթը», պահպանում է էութիւնը: Նրա համար ևս Դաշնակցութիւնն ու հայկական ըմբոստութիւնը կօշմարներ են և նա ևս իր երկդիմի բանաձևով ներշնչում է կառավարութեանը՝ ծածանեցնել միշտ հայերի վրայ կնուտի ու արեան քաղաքականութեան դրօշակը:

Եւ այդպէս միանում են սրտառուչ մի դաշնակցութեան մէջ ցարական կամարիլլան, Դումայի աջակողմն ու կենտրոնը՝ «ամենահարուստ ծայրագաւառի» յեղափոխական ու կուլտուրական բոլոր ուժերը խեղդելու համար: Միշտ բացասական գործունէութեան նպատակով են դաշնակցում երրորդ Դուման ու կառավարութիւնը:

Վօրօնցով-Դաշկով նոյնպէս մտնում է պետերբուրգեան այս նիզակակցութեան մէջ: Իր զեկուցումներով, Դումայում, նա յայտարարում է, թէ Հ.Յ.Դաշնակցութիւնը յաղթահարուած է, թէ նա հող էլ չունի հայկական իրականութեան մէջ. բայց դա չի արգելում «ազատամիտ կոմսին» որս կազմակերպել հայ մտաւորականութեան ու երիտասարդութեան դէմ, որոնց նա, անշուշտ, նոյնացնում է յեղափոխական գաղափարի ու Դաշնակցութեան հետ: Հալածողական տենդը – խուզարկումներով, ձերբակալումներով ու աքսորներով – անընդհատ շարունակւում է: Անխնայ հարուածում են Վօրօնցովեան դատարանները և բոլոր նրանց, որոնք 1905-906-ի աղէտաւոր օրերում, թիւրք-հայկական ընդհարումների մէջ, Դաշնակցութեան դրօշակի տակ ակամայ զէնք են առել ու պաշտպանել հայ խաղաղ ազգաբնակութիւնը: Իսկ նոյն դատարանները որքա՜ն ներողամիտ են դէպի այդ հսկայական աղէտ-ոճրի ճշմարիտ հեղինակները...

Ոչ մի նշոյլ բարենորոգչական լուրջ աշխատանքի: Կովկասեան վարչութիւնը պիտի ձգտէ խեղդամահ անել այն փոքրիկ նուաճումները, որ ձեռք են բերուած արիւնալի ըմբոստացումներով, եթէ մենք մշտապէս վառ չը պահենք հակազդելու տրամադրութիւնը: Մեր լակէյ մամուլը կարող է շռայլել Վօրօնցով-Դաշկովին «խաղաղարարի», «դպրոցները վերաբացողի» և այլն տիտղոսները. մենք չենք, որ պիտի մոռանանք անցեալ ու ներկայ իրողութիւնները, և մենք չենք, որ պիտի անբարոյացնենք ժողովուրդը ստրկական խնկարկումներով:

Հ.Յ.Դաշնակցութիւնը ատում և հալածում է բռնակալական Ռուսաստանում հէնց այն պատճառով, որ նա 1903-905-906-ին իր զինուած ու համատարած դիմադրութեամբ ստիպեց վերջ ի վերջոյ մեր սանձարձակ բիւրոկրատներին՝ լինել փոքր ինչ զգուշաւոր հայ տարրի վերաբերմամբ, ստիպեց նրանց a contre-coeur, ակամայօրէն ստանձնել «դպրոցները վերաբացողի», «խաղաղարարի» պաշտօնը:

Հայ դաշնակցական մարտիկներին, ինքնապաշտպանութեան զինուորներին վօրօնցովեան դատարանները տանջում են հէնց այն պատճառով, որ նրանք սովորեցրել են հայ ժողովրդին Իրաւունքի սրբազան կռիւը, արծարծել են ինքնապաշտպանութեան փրկարար բնազդը, բարձրացրել են հայ մասսաների դիմադրական կորովը, ներշնչել են թշնամիներին յարգանք ու ակնածութիւն և միանգամ ընդմիշտ դուրս են վտարել մեզ շրջապատող բռնաւոր խուժանների ու իշխողների գիտակցութիւնից հայի համար ծայրայեղօրէն անարգական այն դօգմը, որի համեմատ հայ մարդուն կարելի էր անվերջ տրորել, ոտնահարել և անպատիժ մնալ...

Այդ տեսակ պատմական փաստերից է բխում մեր թշնամիների թունոտ ատելութիւնը - և մենք չենք զարհուրում նրանից:

Տասնևութ տարուայ ծանր փորձութիւններից յետոյ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար դիւրին է արհամարհել և այն խելագար արշաւանքը, որ բորբոքւել է ներկայումս, մի քանի տարբեր միջավայրերում:

Ոչ դրակօնեան սպառնալիքները, ոչ սեպարատիզմի, «անջատականութեան» վայնասունը, ոչ էլ մեր ներքին գծուծ, գարշահոտ ռէակցիան չեն կասեցնի նրա ընթացքը:

Խաչատուր Ստեփանյան
Ռուբեն Տեր-Մինասյան
(Կյանքը և գործը),
Երևան, 2008, 183 էջ



Հայ պատմագրության ու գաղափարագրության հատորները բազում անդրադարձներ են պարունակում հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսների ու գաղափարական երևելի անհատների կյանքին ու գործունեությանը, ում ներդրումը անուրանալի է հայ ժողովրդի կազմակերպման, իր իրավունքների համար պայքարի և, ի վերջո, հայ պետականության ստեղծման գործում: Նրանց մեջ իր առանձնահատուկ կյանքի հետագծով առանձնանում է Ռուբեն Տեր-Մինասյանը, ում բնորոշելիս հեղինակները կանգ չեն առնում դրական մակդիրներ ընտրելու դժվարության առաջ: Որքան որ խիստ էր, նույնքան էլ՝ արդարամիտ, որքան որ հեռատես էր, նույնքան էլ՝ իր հեռահար նպատակներին հասնելու մեջ նախանձախնդիր: Բնավորության այս գծերով օժտված հայորդին 20-րդ դարասկզբին իր ժողովրդի կյանքում տեղի ունեցող իրադարձությունների բովում չէր կարող հեռու մնալ ընդհանուր գործից: Դեռ ավելին, նա պետք է դառնար այդ ընդհանուր գործի ոգին ու կազմակերպիչներից մեկը, հենասյուներից մեկը վերջապես, որ իր վրա էր կրելու պետականություն չունեցող ժողովրդին իր արմատներին կառչած պահելու և հայրենի հողի վրա ապրեցնելու գործի զգալի ծանրությունը: Ռազմական, պետական, կուսակցական և բաղաքական գործիչ: Ահա ոչ լրիվ ցանկն այն բնագավառների, որոնցում Ռուբեն Տեր-Մինասյանը դրսևորեց իր տոկուն կամքն ու նվիրվածությունը: Ֆիդայական երդումից սկսած՝ մինչև Հայաստանի Առաջին Հանրապետության ռազմական նախարար ու մինչև հայրենիքից հեռու գտած իր վախճանը, նա պահեց իր անաղարտ դիմագիծն ու սերունդների հիշողության մեջ մնաց որպես արդարության մարմնավորում:

Ռուբենի՝ Մինաս Տեր-Մինասյանի հեղափոխական գործունեության երկու դրվագ, որ չի շրջանցել նաև սույն մենագրության հեղինակը և որ մենք նույնպես ցանկանում ենք ներկայացնել ստորև, էապես կնպաստեն, որ ընթերցողը լիուլի ըմբռնի Ռուբեն հայի ու սառնասիրտ, շիտակ հեղափոխականի կերպարը:

Մակարի և Գևորգի միջև եղած հակասությունը վատ էր անդրադառնում ֆիդայիների կարգապահության վրա: Պետք էր կանխել հարաբերությունների հետագա սրացումը, և գործին միջամտում է Ռուբենը: Նա գիտեր, որ գործ է ունենալու Գևորգ Չաուշի և Սպաղանցի Մակարի նման փառավոր անցյալ ունեցող հեղինակությունների հետ, բայց նաև գիտեր, որ այդ կնճռի հարթումից է կախված ընդհանուր գործի հաջողությունը: Վստահ, որ ավանդապահ Մակարի՝ Բյուրոյի տեսակետից շեղվելն ու Տարոնի զինվորական ղեկավարի հանդեպ ժողովրդի մեջ անվստահություն առաջ բերելը սխալ է, Ռուբենն արձակում է իր վճիռը. «Թէ որ դուն Մակարն ես Սպաղանաց, որ 20 տարիէ աւելի զէնք ես շալակած, թէ որ դուն ես ֆիտայու պատուին ու կարգապահութեան նախանձախընդիր, ապա իբր օրինակ՝ դուն իսկ քո ձեռքովդ պիտի պատժուիս, ուստի

հանդիր զէնքերդ ու զիս յանձնիր»: Պատկերացնել է պետք, թե ինչ խստությամբ ու աննահանջ տոնով են ասվել այս խոսքերը, որ ցանկացած բնամուց չերկնչող Սղաղանցի Մակարը՝ հանդուգն այդ ֆիդային, լռելյայն հնազանդվել է:

Պատիժը երկար չի տևում: Մի քանի օր անց ֆիդայիները հաշտվում են ու նաև Գևորգ Չաուշի համաձայնությամբ Ռուբենը կարձում է պատիժը՝ վերադարձնելով զենքերը: Նա իր նպատակին հասել էր:

Կազմակերպչական գործունեության ընթացքում Ռուբենը շատ է շրջագայել Տարոնի գյուղերում, շփվել մարդկանց հետ, նրանց ներշնչել հայրենի հողին ու երկրին նվիրված աղրելու գաղափարը: Հայկական գյուղերում հողաբաժին ձեռք բերած ամեն մի թուրք կամ քուրդ իսկական պատուհաս էր դառնում այդ գյուղի համար: Պատահում էին դեպքեր, որ աղրուսի միջոցներից զրկված հայ գյուղացին իր հողը կամ վաճառում, կամ էլ վարձակալության էր տալիս նրանց: Այս իրողության հանդեպ հատկապես Ռուբենն անողոք էր: Պատմում են, որ նա Ղաշղալթաղ գյուղի բնակիչներին հրահանգում է մի-մի խուրձ խոս վերցնել և շրջապատել որբևայրի հայ կնոջ՝ Մաքոյի տունը, այն տանտիրոջ հետ միասին կրակ տալու համար: Մաքոն իր զույգ աղջիկներին մի կերպ պահելու նպատակով իր արտը փոխառու թյամբ տվել էր գյուղի բեկին, և կարեկցանքից դրդված՝ գյուղի կուսակցական ներկայացուցիչը չէր կարողացել հանդիմանել նրան: Գյուղացիները, պարզ է, խնդրում են Ռուբենին այդպես դաժան չվարվել, բայց Ռուբենի նպատակը խեղճ Մաքոյին պատժելը չէր, այլ նման արարքի համար պատժվելու հեռանկարը գյուղացիների մեջ ամրապնդելը: Իմաստուն գործիչն իր վճռից «նահանջում է» միայն այն պայմանով, որ գյուղացիներն իրենց միջոցներով հետ առնեն արտը և օգնեն Մաքոյին հոգալ անչափահաս երեխաների հոգսը:

Խաչատուր Ստեփանյանն իր այս մենագրության մեջ հստակ ներկայացրել է Ռուբեն Տեր-Մինասյանի կյանքի ու գործունեության շրջանները, տարանջատել դրանք առանձին գլուխներով ու պատումներով, իսկ անցումները կատարել այնպես, որ տարբեր գլուխները տրամաբանորեն միաձուլվել են՝ տալով կուռ պատկերը տվյալ ժամանակի և այդ ժամանակն իր մեջ կրած հայ հեղափոխականի ու մտավորականի:

Հետաքրքիր է նաև հեղինակի ինքնագնահատականը, որ նաև մի յուրովի կոչ է աղագա ուսումնասիրողներին. «Ռուբեն Տեր-Մինասյանի կյանքին ու գործունեությանը նվիրված սույն աշխատությունը, իր արծարծումներով առաջինը չէ և, բնականաբար, չի հավակնում վերջինը լինել»: Իսկ որ այդպես էլ կլինի, չենք կասկածում, քանի որ Ռուբենի անվան հետ կապված առատ փաստական նյութն ու Հայաստանի ազգային արխիվի Ռուբեն Տեր-Մինասյանի՝ բոլորովին վերջերս ստեղծված ֆոնդը սպասում են իրենց աղագա ուսումնասիրողին:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ



Արևիկ Պետրոսյան

«Տեսակով ես ինչ-որ բանի դեմ պայքարող չեմ, այլ մարդ եմ, որը փորձում է կողմ լինել: Կողմ գեղեցկությանը, սիրուն, իսկ արվեստով կարելի է շատ բան փոխել: Այնպես չէ, որ արվեստագետ ենք, լուռ ենք»:

«Երկիր մոլորակը մեր տունն է, մենք նրա բնակիչները: Մեր տանը խաղաղություն հաստատելու ճանապարհին պարտավոր ենք Սեր ու Բարություն սերմանել, որպեսզի թեւակոխելով հագեցած տեխնիկական հնարավորություններով լի 21-րդ դարը, կարողանանք ճիշտ գնահատել եւ պահպանել շռայլորեն մեզ տրված երջանկությունը՝ մեր բնությունը:
Այս է դրված գաղափարիս հիմքում, որ պայքարի է մղում ընդդեմ բռնության բոլոր արտահայտումների եւ ես, լինելով կին նկարչուհի իմ խոսքն եմ ուղղում մարդկությանը լուռ արվեստիս, գեղեցիկի լեզվով»:





ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ





ԴՐՕՇՈՒԿ